

Արժանացրելու ֆր.
ԱՅՏՈՒՄԱՅԻՆ ԳՐԱԾԱՐԱՆԱՐԿՈՒՄԻՆ

9(47.925)

Կ-78

4

9 (47.925)

31 AUG 2007

5-78

Արժանեցանք ԲԲ.

2011-09

ԱՄԲՈՒՆՅԻՆ ՏՐԱՄԱԲՆՈՒԹԻՒՆ



9613

1004
15408
3091



ՀԱՅ. ԼՍՐՈՒՄ ԻՆ ՓՐԱԿՏԱԿԱՆ
ԳՈՒ ՈՒՅՐ ԵՆՈՒԹՅԱՆ
ՊՐ. Ա. ՄԻՇԻՆԿՅԱՆ
ՄԱՍԿԱՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Vertical red stamp or mark on the left side of the page.



4167-899

ԱՄԲՈՒՍՅԻՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

„Թէ կարելի լինէր ննթադրել, որ տաճկական վարչութիւնը այսպիսի ճգնաժամում (1876, սեպտեմբեր) կարող է Եւրոպայի համաձայնութեամբ կամ նրա վաւերացմամբ շարունակել իր օրինական գոյութիւնը Բօլղարիայում՝ այն ժամանակ պէտք է յանցանք համարել մարդկային արդարադատութեան ամէն մի բողոք՝ իշխանութիւնն իշարը գործ դնելու դէմ, ամէն մի դիմադրութիւն ամէնազազրելի ըննապետութեան դէմ: — Բայց մենք դեռ չենք հասել այդպիսի ծայրայեղ ստորացման“...

Վ. ԳԼԱԴՍՏՕՆ

I

Ամբոխը, կազմւած լինի նա „կրթւած“ թէ անկիրթ մարդկանցից, միշտ տրամադիր է կարծելու, թէ ամէն մի երևոյթ, որին հետևում է մի ուրիշը՝ անմիջական պատճառ է այդ յետագայ երևոյթի:

Այդ է ամբոխի տրամաբանութիւնը և միայն այդ տրամաբանութեամբ կարելի է բացատրել հայոց հասարակութեան որոշ շրջաններում տարածւած այն անհետեւ կարծիքը, թէ հայ յեղափոխականներն են հայկական սոսկալի կոտորածների իսկական պատճառը:

„Post hoc, ergo propter hoc“ — „Այս դէպքից յետոյ, ուրեմն այս դէպքի պատճառով“ — տրամաբանեց *chapeau* կրող ամբօխը և հալած իւղի տեղ ընդունեց թիւրք Հերովդէսի պալատից դուրս եկած եզրիտական մեղադրանքը: Չէ՞ որ հայկական կոտորածներից առաջ ոչ մի նորանշան բան տեղի չէր ունեցել — ոչ արևի խաւարում, ոչ գիսաւոր աստղի ծագում — ոչինչ՝ բացի յեղափոխական ցոյցերից: Ինչ կասկած, ուրեմն, որ այդ ցոյցերը եղան մեր կորուստների պատճառը. թող անիծեալ լինեն այդ ցոյցերը, թող կորչեն յեղափոխականները. — խօսում է մարդկային յիմարութիւնը կամ անսրտութիւնը, — և ահա, ձեր առաջ ներկայանում է մի երեւոյթ, որ նոյնքան դարչելի է, որքան և վնասակար:

Այն ժամանակ, երբ դուք՝ այնպիսի մի չարագործութեան դիմաց, ինչպիսին են հայկական կոտորածները, բռնկւած էք անսահման ցասումի սուրբ զգացմունքով միայն, այն ժամանակ, երբ հայութիւնը ջնջելու բացարձակ քաղաքականութեան դիմաց, դուք կարող էք ունենալ մի անընկճելի ձգտում միայն — ազատել վերջապէս այսբան չարիքների միակ պատճառից, — ահա այդ ժամանակ, ասում ենք, ձեր շուրջը, այս ու այնտեղ, դուք տեսնում էք հայ մարդիկ, որոնք ոտնակոխ անելով բացարձակ ճշմարտութիւնը, պատրաստ են բարին չար անուանել ու չարը բարի, պատրաստ են համարեա թէ արդարացնել մարդկային պատմութեան մէջ չտեսնւած մի բարբարոսութիւն, պատրաստ են անօրինակ բռնութեան հեղինակի մեղքը փաթաթել այդ բռնութեան դէմ կուող բանակի վզին. . .

„Պորած ենք հայերս“, կասէինք մենք համարձակ, եթէ ականատեսս չլինէինք սակայն, թէ ինչպէս մի կողմից

տանջւած ժողովուրդը իր մաքուր բնազգով և միւս կողմից արեւելեան հարցին ծանօթ մարդիկ միանգամայն պարզ են համարում վերջին սարսափների պատճառները, և չեն ձայնակցում հայկական դպիրների ու փարիսեցիների համերգին: Գժբախտաբար կան միամիտ մարդիկ, որոնք զուրկ են այդ բնազգից ու այդ ծանօթութիւնից, և նրանց վրայ մասամբ ազդում է այդ հակայեղափոխական երկդիմի քարոզը: Աւերջապէս հէնց այդպիսի մի քարոզի գոյութիւնը ինքնըստինքեան, — հէնց այն փաստը, որ Արդիւլ Համիդի անթիւ զոհերի անարժան եղբայրները, մոռացած սուրբ վրէժը, կրկնում են այդ գահակալ դահճի և նրա արբանեակների զոպարտութիւնը, — այնպիսի ամօթարեր երևոյթ է մեզ համար, որ մենք ստիպւած ենք երկարօրէն ծանրանալ այդ անհեթեթ մեղադրանքների վրայ:

Բայց թող նախ և առաջ եւրօպացի հեղինակները խօսեն:

„Սուլթանը և պետութիւնները“ վերնագրով իր լայտնի գրւածքի մէջ Մ ա կ - Վ օ լ գրում է.

«Կոտորածները սուլթանների աւանդական քաղաքականութիւնն են կազմում ևւ վերջին վաթսուն տարիների ընթացքում կրկնուել են միջին թւով ամէն 10 տարին մի անգամ. . . . Բ ն ու թ և ա ն օ Ր է ն ք ի կ ա ն ո ն աւ ու ու թ և ա մ ր . . .

. . . Ամէն անգամ, երբ քրիստոնեաները՝ չնայած իրենց անօգնութեան, սխտում էին դ և ր ա զ ա ն ց ե լ միւսիւլմաններից քանակութեան, կրթութեան ևւ բարեկեցութեան տեսակէտով, մահմէդական իշխանները, հետեւելով փարաւոնի քաղաքականութեանը դէպի սարուկ իւրայեւացիները, նւազեցնում էին ազգաբնակիչութիւնը Բօլղարիայի ևւ Սասունի սիստէմով. . .

. . . Տաճիկ ցեղը, ինչպէս ճիշդ նկատում է նաւ-

ասու Սէնտօր, արագ կերպով ջնջւում է. տաճիկ կինը շատ հազիւ գէպքում է ունենում աւելի քան երկու երեխայ... Տաճիկները գիտակցում են, որ իրենք ջնջւում են եւ չեն կարող մրցել քրիտոսոնեաների հետ հաւասար պայմաններում, — գրանով են բացատրում քրիստոնեաների գէժ գործ դրած անընդհատ ճնշումներն ու պարբերական կոտորածները, որոնք միակ միջոցն են յետաձգելու տաճիկների տիրապետութեան վախճանը:

... Սուլթանը, գրում է նոյն հեղինակը մի ուրիշ տեղ, սկսել է իր սիրագործութիւնները Սասունից, եւ եթէ բէֆօրմների ծրագիրը չլինէր, գուցէ այդ կոտորածը առ ժամանակ յագեցնէր նրա արիւնոուշտ սիրտը. բայց բէֆօրմների հիմքում դրած է հայերի եւ միւս սիւլմանների թւի յարարերոց թիւը, ուստի նա վճռեց խանգարել այդ ծրագրի իրագործումը, հակառակ կողմը փոխելով այդ յարարերութիւնը (այսինքն նազեցնելով հայերի թիւը): Այս հանգամանքը պիտի նախատեսնէին բէֆօրմների ծրագիր կազմողները եւ ամէնից առաջ նրանք պիտի հոգային — իմանալով ում հազործ ունեն—միջոցներ ձեռք առնելու այդպիսի պատեհութեան գէժ... Բայց պետութիւնները ոչինչ չարին մարդասպանի ձեռքը բռնելու համար եւ հայերին կոտորելու հրամանը արեւց երկրը—քեօշկից»:

Իրլանդացի Էմիլ Դիլօն, նախկին պրօֆէսօր, որ 1895 թի սկզբում Տաճկաստան մտաւ և Contemporary Review ամսագրի միջոցով առաջին ճշգրիտ տեղեկութիւնները հաղորդեց Եւրօպային Սասունի կոտորածների մասին, ասում է.

«1891 թիւին՝ Բարձրագոյն Դուռը, վախենալով, թէ լուրջ դժւարութիւններ կը ծագեն իր համար՝ Հայաստանում խոստացւած բէֆօրմները մտցնելուց եւ թէ Ռուսիայի սահ-

մանակից նահանգներում բնակող քրիստոնեաները կարող են օգնել Ռուսիային պատերազմի դէպքում, լինելով մի անգամից նրկու նապաստակ սպանելու կազմակերպեց բացառապէս քիւրդերից («Նամիդի») կոչուող հեծելազօրքր: Կառավարութեան մի քանի բարձր պաշտօնեաների առաջարկած ծրագիրն էր՝ ազատել սահմանակից նահանգները, օրինակ Ալաշկերտը՝ հայերից եւ փոխարինել նրանց մահմէդականներով, որպէսզի բոլոր հինգ նահանգներում հայերի թիւը այն աստիճան կրճատուի, որ կարեւորութիւն չմնայ առանձին հայկական բէֆօրմներին եւ որ պատերազմի դէպքում քիւրդերը գործեն իրբեւ հակակիւ կողակներին: Ջնջման այդ բացարձակ քաղաքականութիւնը այնուհետեւ ճշգրտէն իրագործւում է ու հետզհետէ ընդարձակւում, եւ եթէ զրան վախճան չգրուի, անկասկած, այդպիսով վերջնապէս կրլուծուի հայկական հարցը)...

Նշանաւոր անգլիացի Ջէյմս Բրայս գրում է.

«1878-ի անցքերը մեծ ազդեցութիւն ունեցան թէ սուլթանի եւ թէ նրա քրիստոնիայ հպատակների վրայ: Բօլղարիայի ազատագրութիւնը յոյս ներշնչեց կրթւած հայերի մէջ, որ Եւրոպան իրենց համար եւս կ'անէ նոյնը, ինչ որ արաւ բոլղարների համար: Այն միտքը՝ որ հայերը Անգլիայի հովանաւորութեամբ պիտի ձգտէին մի ինքնավար Հայաստան ստեղծելու, նման Բօլղարիային, եւ որ հայերին արեւած այս կամ այն զինուորները կարող էին սկիզբ լինել մի այդպիսի ինքնավարութեան — այդ միտքը ամէնազլխաւոր պատճառն էր, որ միջց սուլթանին բոլղարական սարսափները աւելի մեծ չափերով կրկնելու Հայաստանում»:

Նոյն միտքն է յայտնում և ամերիկացի միսիօնար Գրին, որը, ինչպէս և Բրայս, չհամակրելով հանդերձ արասասհմանեան հայ յեղափոխական կազմակերպու-

թիւններին, պնդում է սակայն, որ տաճիկները բաւական ճարպիկ կերպով աշխատում են դարձնել հասարակութեան ուշադրութիւնը յեղափոխականների վրայ, որպէսզի կարողանան ծածկել իրենց սեփական գործողութիւնները: Իսկ եթէ հարցնէք՝ թէ որո՞նք են այդ սեփական գործողութիւնները, Գրինը մասնացոյց կը լինի The Independant ամբերիկեան լրագրի վրայ, ուր ասւած է.

(Այդպիսով նէջիւր փաշան 1840 թւին (Սիրիայի քրիստոնեանի ջարդը), Բէդէր-խանը 1850 թւին (նեստորականների եւ հայերի կոտորածները Քիւրդիստանում), Սուրչիզ փաշան 1860 թւին (մարտիրանների եւ սիրացոյց կոտորածները Լիբանանում եւ Դամասկոսում), Շէֆկէս փաշան 1876 թւին (բոլղարների կոտորածը) եւ Ջէքի փաշան 1894 թւին (Սասունի ջարդը) — մէկը միւսի ետեւից ջանք են թափել մի ազնիւ եւ մարդասիրական դազափարի վրայ, — ազատել տաճիկական կայսրութիւնը քրիստոնիայ ազգարնակութիւնից) *):

Դառնալով հայերին՝ Գրինը՝ մի կողմից հետեւելով Բրայսին եւ միւս կողմից (ինչպէս ինքն էլ խոստովանում է) մանաւանդ Բօլէն ժակմէնին՝ — գրում է.

(Ասում են, որ հայերը իրենք իրենց դժբախտութիւնների պատճառ եղան, զրգռելով թիւրքերին Բայց ո՞վ զրգռեց հայերին... Երանք տեսան, որ Բօլղարիան ազատեց արիւնից եւ նախատական վիճակից ու ոտ դրեց ինքնաճանաչութեան եւ բարօրութեան ճանապարհի վրայ՝ եւրոպական պետութիւնների պաշտպանութեան ներքոյ: Միթէ կարելի՞ է զարմանալ, որ հայ ժողովրդի սրտում եւս բարձրացան յոյսեր եւ սպասելիքներ — մի այնպիսի ժողովրդի, որ բնաւ ստոր չէ բոլղարներից եւ շատ դէպքերում աւելի տաղան-

*) Այս շարքին աւելացնենք եւ սուլթան Մահմուդին, որ 1822 թւին ամուսնազր 50,000 յոյների ջարդի նեղիմալն եղաւ:

դաւոր... Հայ յեղափոխական զաղափարը ներկայանում է իրբեւ մի նոր երևույթ այս խաղաղ եւ դարերի ընթացքում հնազանգութեամբ՝ տաճկական լուծը կրող ժողովրդի կեանքում: Բայց դա բնական հետեւանք է այն սարսափելի կայոսութեան, որ նկատում է Բերլինի դաշնագրից յետոյ. եւ այս ակտը կը դառնայ օրէցօր աւելի եւ աւելի թունաւոր աւելի եւ աւելի վարակիչ, մինչեւ եւրօպական բժիշկները չգիմեն խիստ ու արմատական միջոցների («հիւանդ մարդու») վերաբերմամբ»:

Մօսկվայի համալսարանի պրօֆէսօր, կոմս Ն. Կամարովսկի, յենեւելով արեւելեան գործերին քաջ ծանօթ յայանի դիւանագէտ կոմս Բէնէդէտտէի կարծիքի վրայ՝ ասում է.

«Տաճիկները՝ համոզուելով, որ իրենց տիրապետութեանը ամէն կողմից վըտանդ է սպառնում՝ այժմ դէպի քրիստոնեաները բացի արձամարձանքից, նաեւ կատաղի, անողորմ ատելութիւն են տածում: Իրենց կոյր զայրագնութեան մէջ, որ—աւելացնենք—միմիայն սաստկանում է եւրօպայի անկարող եւ անվճռողական միջամտութեամբը, նրանք չեն տեսնում ուրիշ ոչ մի միջոց իրենց զօրութիւնը պահպանելու եւ սպառնացող վտանգների առաջն առնելու, բայց թէ կոտորածների միջոցով քրիստոնեաներին ջնջելու: Այստեղից առաջ են գալիս քրիստոնեաների կոտորածները ամէն տեղ, ուր վերջիններս փորձում են դիմադրել տաճիկներին—Բօլղարիայում, Բօսնիայում, Հայաստանում, Կրէտէում եւ այլն: Այդ սիստէմը անանուում («խաղաղացում») եւ մեծանողի փատիշահի հայրական կառավարութեան վերահաստատում: Այդպիսի մի կառուցութեան դիմաց մի՞թէ կարող է խօսք լինել («օրինականութեան») մասին եւ ի՞նչ տեսակ («խաղաղասիրութեամբ») կարելի է արդարացնել նրան պահպանելու ցանկութիւնը»:

Ֆրանսիական յայտնի գործիչ և գրող Ժան Թօրէս՝ հայկական հարցի մասին պարզամէնտում արտասանած իր գեղեցիկ ճառի մէջ, դիմելով արտաքին գործերի նախարար Հանտօյին, 1897 թւի հոկտեմբեր 3-ին, ասաց.

«Դուք մոռացաք աւելացնել... որ հայ յեղափոխականների վրայ ինչ դատաստան էլ որ կտրենք — ապահովապէս նրանք գրգռիչներ (Provocateur) չեղան: Դուք մոռացաք յիշեցնել, որ նրանց պատասխանատուութիւնից առաջ, եթէ միայն նրանք ունէին այդպիսին — եւ ի՞նչ կարող է լինել մի քանի մարդկանց կամ մի քանի կօմիտէների պատասխանատուութիւնը մի ամբողջ ժողովուրդի նահատակութեան եւ կոտորածի դիմաց, — կրկնում եմ, դուք մոռացաք յիշեցնել, որ այլ մարդկանց պատասխանատուութիւնից շատ առաջ եւ նրանից էլ վեր՝ կար սո՛ւլ թ ա ն ի եւ Եւրօպայի պատասխանատուութիւնը»:

Գերմանացի հայասէր Լէպցիոս, որ «Հայաստան և Եւրօպա» իր գրքի վերնագրի տակ դրել է՝ «Մի ամբաստանագիր մեծ պետութիւնների դէմ», մանրամասնօրէն կոտորածների խնդիրը քննելուց յետոյ, ասում է.

«Կրկնում ենք մեր հարցը. — Ի՞նչ բան են Հայաստանի ջարդերը, եւ պատասխանում ենք. դա Բարձր Դրա՛ն ձեռք առած վարչական մի միջոց է, որը ուրիշ շարժանի թ եւ նպատակ չունի, բայց եթէ հայ ազգի ջնջումովը անիրագործելի դարձնել մեծ պետութիւնների պահանջած բէֆօրմները... Բայց հասկանանք իրար. ինչ որ արժանի է պարսաւանքի — դա ոչ թէ այն է, որ Եւրօպայի դիւանագէտները ուղեցին իրենց ձեռքն առնել մի խեղճ ու ջարդած ժողովրդի դատ, այլ այն՝ որ նրանք այդ արին այն պիսի մի ձեւով, որ հայերը ստիպեցին իրենց արիւնով վճարել նրանց քաղաքականութեան գինը»...:

Միջազգային իրաւունքի հեղինակաւոր պրօֆէսօր

բէլգիացի Րօլլէն-Ժակմէն իր մի աշխատութեան մէջ («Հայաստան, Հայեր և դաշնագիրներ») դեռ 1887 թւին, երբ ոչ մի յեղափոխական շարժման մասին խօսք չկար Եւրոպայում, գրում էր.

... «Հայկական հարցը, շնորհիւ Բերլինի դաշնագրի 61-րդ յօդւածին՝ մտաւ միջազգային դրական իրաւունքի շրջանը եւ մտաւ ոչ թէ դիւանագիտութեան քմահաճոյքով, այլ իբր եւ նախքն թաց փաստերի եւ գաշինքների տրամաբանական հետեւանք: Նոյն այդ տրամաբանութիւնը պահանջում է այժմ, որ 61-րդ յօդւածը գործադրուի եթէ այս պահանջը չիրագործուի, եթէ այս շատ ընդունակ ժողովուրդը, որ ազգային գիտական թիւն ունի եւ որի իրաւունքները հանդիսանոր կերպով արդէն ընդունւած են, առաջաջ պէս անպատիժ հարստահարի. եթէ տաճիկ կառավարութիւնը չկամենայ կամ չկարողանայ կատարել իր խոստումները, իսկ Եւրոպան մոռանայ յիշեցնել նրան այդ մասին,—այն ժամանակ հայկական հարցի հետ՝ առաջին յարմար առիթով կը պատահի նոյնը, ինչ որ պատահեց բուսնական, սերբիական, բոլղարական, բուսնական հարցերի հետ: Դա կը լինի մէկը այն անակնկալներէ, որոնք սովորաբար առաջ են գալիս անհեռատեսութեան շնորհիւ ինչպէս դիւանագիտութեան, այնպէս էլ բժշկականութեան մէջ: Նրանք նման են այն վառ ու փոթորկալ տեղերին, որոնք — շնորհիւ այն բանի, որ սկզբում անինամ են վերաբերում, — յանկարծ բռնկուում են լափող եւ մահաբեր արագութեամբ»:



Դիմենք այժմ եզրակացութիւններին: Ամիոփելով այդ կարծիքները, մենք տեսնում ենք, որ Մակ-Աօլ, Բրայս և Դիլօն Անգլիայում, Գրին Ամերիկայում, կա-

մարտիկի Ռուսաստանում, Թորէս Փրանսիայում, Լէպ-
ցիուս Գերմանիայում, Բոլէն-Թակմէն Բելգիայում —
միաձայն պնդում են, որ հայկական կոտորածն երիւրսու պատճառներն են մի
կողմից՝ տաճիկ կառավարութեան
գիտակցօրէն ընդունած վճիռը՝
նւազեցնել հայերի թիւը Հայաս-
տանում (միանգամայն անկախ յեղափոխական շար-
ժումներից), և միւս կողմից՝ եւրօպայի քաղա-
քականութիւնը հայերի վերաբերմամբ:

Այո՛, այդ բոլոր հեղինակները ոչ մի տարակուսանք
չեն թողնում, որ սուլթանական կառավարութիւնը
հայերի ջնջման ձգտելու համար ունէր աւելի խորին
շարժառիթներ, քան յեղափոխական ձեռ-
նարկներն են, ինչպէս ենթադրում է ամբոխային տրա-
մարանութիւնը:

Ահա այդ շարժառիթները.

Առաջին. — Հաւասար և ազատ պայմաններում
տաճիկները անկարող են մրցել հայերի հետ,
որոնք գերազանցում են նրանցից կուլտուրայով, իրենց
աճելութեան ուժով և տնտեսական յառաջդիմութեամբ:

Երկրորդ. — Հայերի մտաւոր-բարոյական վերա-
ծնութիւնը մի կողմից և տաճիկական զարհուրելի բեժիմը
միւս կողմից՝ անհրաժեշտօրէն ստեղծեցին հայկական
շարժում, որի հետևանքը եղաւ հայկական հարցը,
իրրև Հայաստանի ինքնավարութեան ծրագիր կամ
առնւազը — պահանջ՝ բեֆօրմներ մտցնելու հայկական
նահանգներում, որ ուրիշ ոչ մի կերպ չեն հասկանում
տաճիկները, բայց եթէ Թիւրքիայի ջլատում:

Յերրորդ. — Հայկական նահանգները սահմանակից

են Ռուսաստանին—տաճիկների համար այդ ամենավտանգաւոր թշնամուն. խոստացւած ըէֆօրմները կարող են առիթ տալ ռուսներին միջամտութեան, որ հաւասար կը լինի հայկական նահանգների գրաւման, մանաւանդ որ պատերազմի ժամանակ հայերը կարող են մեծ ծառայութիւններ մատուցանել ռուս զօրքերին:

Այդ մէկ: Իսկ ինչ վերաբերում է միւս հիմնական պատճառին—այն է՝ Եւրոպայի քաղաքականութեան, նոյն հեղինակները միւսնոյն ներդաշնակութեամբ պնդում են, որ Եւրոպան իր վրայ վերցնելով հայերի վիճակը բարւոքելու պարտականութիւնը, գրանով Թիւրքիայի ամբողջութեան կամ գերիշխանութեան առաջ քաշեց երկիւղի մի մեծ դուռ, բայց միաժամանակ ոչ միայն ուէ ազդու քայլ չարա յօգուտ հայերի, այլև շնորհիւ իր եսամոլ, նախանձոտ ու ոճրագործ ընթացքին, միանգամայն ապահովեց Մեծ Մարդասպանին՝ իրագործելու հայկական կոտորածների դժոխային ծրագիրը...

Եթէ մենք ճիշդ ամփոփեցինք օտար հեղինակների խառնաշոյթ արած պատճառները, ապա հարցնում ենք.— ի՞նչ մասնունեն այդ պատճառների մէջ հայ յեղափոխականները, որոնց մեղադրում է այսօր ամբուխային տրամաբանութիւնը:

Միթէ՞ նրանց քարոզների շնորհիւ էր, որ հայ ժողովուրդը սկսեց քերականցել տաճիկներից իր աճելութեան ուժով, տնտեսական յառաջդիմութեամբ, կուլտուրայով...

Միթէ՞ նրանք ստեղծեցին հայերի մէջ մտաւոր շարժում, առաջ բերին ազգային ինքնաճանաչութիւն, ազատեցին

Բողոքարիան և հիմք դրեցին «հայկական հարցին»...

Միթէ՞ նրանք թշնամացրին Ռուսաստանը Թիւրքիայի հետ կամ մօտեցրին դրանց սահմանները, կպցնելով Փոքր Ասիան Կովկասին...

Միթէ՞ նրանք խրախուսեցին Եւրօպայի անտարբերութիւնը, շահասիրութիւնը, մարդակերութիւնը...

Կարծում ենք թոյլ կը տրւի մեզ պատասխանել՝ ո՛չ։ Բայց այդ բաւական չէ։ Հայ յեղափոխականները ոչ միայն մաս չունին կոտորածների այդ ի ս կ ա կ ա ն պ ա տ ճ ա ո ն եր ու մ, այլև — խորին համոզմունքով պնդում ենք — նրանք իրենք, ամբողջ հայ յեղափոխական շարժումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ նոյնպէս մի անհրաժեշտ բնական հետեւանք միևնոյն տնտեսական ու պատմական-քաղաքական պատճառների։

II

Բայց եթէ յեղափոխական շարժումը չի կարող պատճառ համարւել հայկական կոտորածների, նա գուցէ այս կամ այն դէպքում ծառայել է իբրև առիթ, իբրև պատրւակայի կոտորածները սկսելուն։ Ինչո՞ւ ուրեմն տալ առիթ կամ պատրւակ, կարող է ասել ընթերցողը, ինչպէս ասում են շատերը և դրանց թւում — թէև երբեմն շատ ծուռ ու մուռ ձևերով — նոյնիսկ մի քանի հայասէր եւրօպացիներ։

Բնենք հարցը և այս տեսակէտից։

Ով սովոր է հասարակական երևոյթները քիչ-շատ կանոնաւոր կերպով ընդհանրացնելու, իհարկէ, գիտէ, թէ որքան ուժեղ է իրերի ընդհանուր հոսանքը պատ-

մական առանձին դէպքերի, առանձին անցքերի դէմ. նա գիտէ, որ տարիներն ու տասնեակ տարիները, որոնք կարող են նշանակութիւն ունենալ անհատի կեանքում, պատմութեան մէջ մի-մի վայրկեաններ են լոկ, որոնց հիման վրայ դժւար է ո՛րէէ գուշակութիւն անել. նա գիտէ, թէ որքան անիմաստ է ամբոխային տրամաբանութեան սովորական ընթացքը — ամէն երեւոյթ գատել այն անմիջական տպաւորութիւնների համեմատ, որ ստանում է անհատը կեանքի այս կամ այն հարւածներից. նա գիտէ, ի՛նչ է նշանակում խօսել «առիթ» կամ «պատրւակի» մասին այնտեղ, ուր կան ներքին, հիմնական պատճառներ:

Ահա այդպէս վերաբերելով կեանքի պատմական ելևէջներին, մենք մեզ համար միանգամայն պարզ ենք համարում հետևեալ չորս դրութիւնները.

1. Երբ կան հիմնական պատճառներ ո՛րէէ երեւոյթի առաջ գալու համար — առանց ակներև «առիթի» էլ երեւոյթը զարգանում է:

2. Երբ չկան հիմնական պատճառներ — նոյնիսկ խոշոր դէպքերն էլ «առիթի» նշանակութիւն չեն ստանում:

3. Երբ կան հիմնական պատճառներ — հարկաւոր դէպքում «առիթ» կամ «պատրւակ» երբէք չեն պակասիլ:

4. Երբ կան հիմնական պատճառներ — դրանց դէմ կուող բոլոր միջոցները ոչ միայն վնասակար չեն կարող լինել, այլ միանգամայն անհրաժեշտ հակակշիռ պիտի համարւեն:

Այս կէտերի համաձայն էլ մենք կը դասաւորենք մեր ասելիքը:

Բոլորիս յայտնի են տյն կատաղի հալածանքները,

որ վերջին տարիները ուսուցանողները յարուցել է հայերի դէմ: Մեզ համար այդ ամէնը շատ հասկանալի է այն տեսակետից, որ հայ տարրը վերջին ժամանակներս տնտեսապէս և մտաւորապէս ուժեղանում էր Կովկասում, իսկ ուսական անընդունակ բնակչութեան եթէ շատ բան էլ չի հասկանում, գոնէ այդքանը հասկանում է, որ իր սեփական ուժը պահպանելու հիմնաքարը — հպատակների թուլութիւնն է: Նոյն տեսակետից մեզ համար միանգամայն պարզ են նաև հրէաների պարբերական ջարդերը հարաւային Աուսաստանում և մի շարք ուրիշ երևոյթներ: Բայց հարցնում ենք. ի՞նչը «նոսրութիւն» տւեց այդ բոլորին: Ար հրէաները իբրև մի ամբողջութիւն, ամէն բանով հետաքրքրուում են, բացի քաղաքական հարցերից — այդ յայտնի է ամբողջ աշխարհին: Ար հայերը Աուսաստանում ամէնախոնարհ կերպով համակերպում են կառավարութեան բոլոր հարուածներին — այդ ևս ստոյգ է. ուստի կառավարութեան բոլոր խուզարկութիւններն ու ձերբակալումները, գաղտնի հսկողութիւններն ու բազմաթիւ քննութիւնները երբէք չկարողացան այդ կառավարութեան դէմ ո՛նէ ազիտացիայի, ո՛նէ գաղտնի գործունէութեան հետքեր գտնել: Կարո՞ղ է միթէ խօսք լինել սրանից էլ աւելի «խոհեմութեան», «ղգուշութեան», «շրջահայեցութեան» մասին: Եւ սակայն հայերին Կովկասում հալածում են, հալածում են անվերջ, ամէնամասիրտ, ամէնատխմար կերպով: Բայց երևակայեցէք, ընթերցող, ի՞նչ կը լինէր, եթէ մէկը ձեզնից կովկասեան հայ դպրոցների առաջին փակման միջոցին, այսինքն 1885-ին, չտանելով կառավարութեան բարբարոս կարգադրութիւնը՝ վճռէր ուսահայերի մէջ այդ առթիւ առաջացած ընդհանուր դալրոյթի

արտայայտութիւնը լինել և հայոց դպրոցներից մէկի կամ միւսի շէմքում տեղիւնւածը փութը ուսւ պաշտօնեաներից ուէ Կիրիլլովի կամ Պետրովի գիակը... Կարող էք մի վայրկեան անգամ տարակուսել, որ այդ դէպքում յետագայ բոլոր հալածանքների «պատճառ», «առիթ», «պատուակ» — ինչ կամենում էք — պիտի համարուէր այդ դիմադրութեան դէպքը: Եւ ո՞վ գիտէ, կը բաւականանա՞ր արդեօք ամբոխային տրամաբանութիւնը միմիայն Ռուսաստանով, թէ Լօբանովների քաղաքականութեան (հայոց հարցի վերաբերմամբ) սկզբնապատճառն էլ նոյն այդ «սոսկալի» դէպքը պիտի համարէր... Նոյնը, ի հարկէ, կը լինէր և հրէաների մէջ, եթէ այնտեղ էլ ուէ հակահռակաբարզական գոյն ունեցող իրողութիւններ տեղի ունենային: Ահա ուրեմն հալածանքների և ջարդերի կենդանի օրինակներ, որոնց համար իզուր կը լինէր ուէ ակներև «առիթ» փնտռելը:

Բայց անցնենք Թիւրքիային:

1880 թւի սեպտեմբերի 11-ին Բ. Դրանը ներկայացրած ընդհանուր մի ծանուցագրի մէջ վեց պետութիւնները, իմիջի ալլոց, պնդում են.

«Հէնց այն դարձումները, որոնցով Բ. Դուռը իրեն իրաւունք է համարում խօսել հայարնակ նահանգներում կատարած յանցանքների մասին, ապացուցանում են, որ Դուռը չի ընդունում այն ան ի շխանութիւնը, որ տիրում է այդ նահանգներում, ոչ էլ իրերի գրութեան լրջութիւնը, որը եթէ շարունակւի, հաւանօրէն պիտի առաջացնէ քրիստոնեաների ջնջումը այդ լայնատարած նահանգներում»:

Ռուս սպայակոյտի գնդապետ Կարցով՝ Ռուսաց աշխարհագրական ընկերութեան յիշատակարաններում

1004
15402
30491
4167-89



„Քրդեր“ վերնագրով իր մի յօդածի մէջ բերում է հետեւեալ փաստը.

«1880 թւին վանում տեղի ունեցաւ քիւրդ ցեղապետների մի համագումար (գլխաւոր խորհուրդը իսկապէս կայանում է Շամղինանում): Ասում են, որ տաճիկները զազանի առաջարկեցին նրանց՝ վերջնապէս ոչնչացնել Քիւրդիստանում^(*) գեռ մնացած հայերին: Ոչ մի անկարելի բան չկայ այսպիսի մի առաջարկութեան մէջ, եթէ ինկատի առնենք, որ այն ժամանակ նոր էր հրատարակւած հալերին ինքնավարութիւն խոստացող 61-րդ յօդածը: Չնայելով իրենց ատելութեան և արհամարհանքին դէպի հայերը, քիւրդերը սակայն չընդունեցին այդ առաջարկը, ինչպէս պատում են, այն պատճառով, որ պետերից մէկը նկատեց. «Երբ մենք կը ջնջենք հայերին՝ տաճիկները մեզ վրայ կը յարձակւեն»:

Փաստը միանգամայն ճիշդ է, և իր ժամանակին 900 հայ վանում ընդհանուր ստորագրութեամբ բողոքեցին կռաւվարութեան այդ ծրագրի դէմ: Բայց, ինչպէս տեսնում է ընթերցողը թէ վեց պետութիւնների հաւաքական ծանուցագիրը, որը նախատեսնում էր հայերի ջնջումը առանց սակայն կանգ առնելու դրա համար հարկաւոր ունէ «առիթի» վրայ, և թէ հայերին ջնջելու ծրագիրը ու դրա իրագործման համարձակ փորձերը տեղի են ունեցել մի այնպիսի ժամանակ, երբ, որքան մեզ յայտնի է, հրապարակի վրայ գոյութիւն չունէր ոչ մի հայկական յեղափոխական կազմակերպութիւն:

Ո՞ւր մնացին ուրեմն յանցապարտ «առիթները»...

Անցնենք մեր վերը բերած չորս դրութիւններից երկրորդին:

Գաղտնիք չէ, որ թիւրք ազգաբնակչութիւնը կոպկասում

մի որրան է ամէնասոսկալի աւագակութիւնների, որ
թիւրք աւագակների անթիւ խմբերը Կովկասի մէջ կազ-
մում են երկրորդ կառավարութիւն, որ նրանք երբէք
չեն խնայում ուսուստիկանութեան ներկայացուցիչնե-
րին՝ աջ ու ձախ գնդակահարելով նրանց, և մինչև իսկ
փորձեր են արել գերի վերցնելու գաւառապետներ և
նոյնիսկ նահանգապետ: Յայտնի է նոյնպէս, որ նոյն ուսու-
կառավարութիւնը կովկասեան ազգերից թիւրքերին
սիրում է բոլորից աւելի: Չարմանալի չէ՞: Թիւրքերը
երկիրը անիշխանութեան են մատնում, կոտորում են
իրենց ետևից գնացող մանր ու խոշոր պաշտօնեաներին,
ամէն տեղ իրենց հայրենակիցների մօտ գտնում են
ապաստան և պաշտպանութիւն, սպառնում են մի գե-
ղեցիկ օր երկիրը թողնել առանց կառավարիչների, բայց
և այնպէս ուսմանը այսօր հոգեգմայլ քնքշութիւն են
տածում դէպի թիւրքերը, փոխանակ... փոխանակ նրանց
ջարդելու, ինչպէս պիտի հետևէր ամբողջին սովորա-
կան աշխարհայեացքից: Նոյն երևոյթը տեղի ունի
Տաճկաստանում քրդերի վերաբերմամբ: Շատ տեղ և
շատ վաղուց քիւրդ աշիրէթները թշնամական, անկախ
գիրք են բռնել տաճիկ կառավարութեան դէմ. բայց այն
օրից, երբ վերջինս համոզւեց, որ քրդական ցեղերը
իրենց ներկայ վիճակում և սեփական ուժերով միայն
անկարող են ՝ «Գիրդիստանը» վերականգնել, նա ո՛չ միայն
այլևս չի հալածում քրդերին, այլ, ինչպէս գիտենք, նրանց
վրայ է հիմնում հարկաւոր դէպքերում իր ուժը: Ի՞նչ
եզրակացութիւն կարող ենք հանել այս երևոյթներից.
— այն, որ քանի դեռ թիւրքերն ու քիւրդերը Կովկասում
և Տաճկաստանում գտնւում են իրենց այժմեան տնտե-
սական դրութեան և կատարեալ տգիտութեան մէջ,

նրանց ներուում են և դեռ շատ երկար ժամանակ պիտի ներուին հազար ու մի տեսակ «առիթներ» . . .

Լօրդ Ստրատֆօրդ դը Բէդլիֆ, որ համարում է Տաճկաստանի լաւ բարեկամներից մէկը, իր «Արևելեան խնդիրը» վերնագրով աշխատութեան մէջ ասում է.

«Տաճկաստանը թոյլ է, մոլեռանդ և վատ է կառավարում . . . Արևելեան հարցը մի փաստ է, մի իրականութիւն, որ ձգձգում է անվերջ . . . Ի՞նչ մի հրաբուխ է . . . որի ժայթքումն երբ կրկնուուում են յաճախ, բայց այդ ժայթքումների առիթները անորոշ են և ազդեցութիւնը՝ աներկ . . . Միթէ 1860 թիւն Սիւրիայում անդի ունեցած կոտորածը մեղ համար անսպասելի չէ՞ր . . . Ունե՞նք արդեօք սեւէ լուրջ հաւաստիք, որ չեն կրկնուելու միեւնոյն սարսափները, միեւնոյն անխուսափելիութիւնը և նոյնանման դէպքերը . . . Տաճկական կայսրութեան արդի գրութիւնը որոշում է նրա՝ դէպի կատարեալ անգորութիւն տանող բնական ընթացքով . . . Մենք չգիտենք, արդեօք շուտով և ո՞րտեղ կրկին կը ժողովեն անգղաներին նոր կոտորածները կամ խռովութիւնները»:

«Ժայթքումները կրկնում են յաճախ», «առիթները անորոշ են», «դէպքերը անսպասելի» — ասում է Ստրատֆօրդ ու անցնում, որովհետև այդ ամէնը բղտում է Տաճկաստանի գրութեան «բնական ընթացքից», որովհետև երբ մի պետութեան կեանքում գոյութիւն ունեն որոշ հիմնական պայմաններ, նրանք անդառնալի կերպով այսօր թէ վաղը պիտի առաջացնեն նաև իրենց ճակատագրական հետեանքները բոլոր հարկաւոր ու ոչ հարկաւոր՝ բոլոր որոշ ու անորոշ «առիթ-պատուակներով» հանդերձ:

Եւ իրաւ: Մենք արդէն տեսանք, որ սուլթան Աբդուլ-Համիդ իր հայաջինջ ծրագիրը գործադրելու համար ջանքեր էր անում դեռ 1880 թւին, երբ ըստ երեւոյթին հայերի կողմից „առիթներ“ չէր տրւած: Բայց մի՞թէ, եթէ այդ էլ չգիտենայինք, երբեկից տաճիկ կառավարութեան համար պիտի պակասէին „առիթ-պատրւակները“:

1880 թւի մայիսին հիւպատոս Էվէրստ հեռագրում էր անգլիական կառավարութեան.

Եթէ մի տարի առաջ (1879) չկար ոչ կեանքի, ոչ գոյքի ապահովութիւն, այժմ այդպիսի ապահովութիւն աւելի քիչ կայ: Եթէ առաջները աղքատութիւն կար, այժմ աւելի է: արդարադատութեան նշոյլ անգամ չկայ, իսկ յանցանքները, կաշառակերութիւնը եւ բռնութիւնները աւելացել են... Ամբողջ ազգաբնակչութիւնը կատարեալ յուսահատութեան մէջ է եւ այժմ աւելի յաճախ, քան առաջ, վրդովիչ փաստերը առաջ են բերում անկարգութիւններ եւ տեղական խռովութիւններ, մինչեւ անգամ առանց մասնաւոր փոխադարձ համաձայնութեան եւ նախամտածութեան խեղճ ուսաների կողմից, որոնք համբերութեամբ տանում էին բազմադարեան բռնութեան ճնշումը»:

Ընթերցողին խնդրում ենք ուշադրութիւն դարձնել այս „առանց փոխադարձ համաձայնութեան և նախամտածութեան“ դեռ 1880-ին առաջացող „տեղական անկարգութիւնների և խռովութիւնների“ վրայ. հրաւիրում ենք նրան ծանօթանալ հիւպատոս Վէլյոսոնի մի հեռագրի հետ, ուր նա նկարագրում է մի ինչ որ բնաբաշտ հարստահարութիւնների պատճառով ծագած այդ տեսակ խռովութիւններից մէկը (Վապոյտ գիրք, 1881). յիշեցնում ենք նրան, որ Տաճկաստանում լրագործներով չպէտք է փնտրել „վրդովիչ փաստեր“. առաջար-

կում ենք մտաբերել 1880-ի Վանի բողոքագիրը, խընդրում ենք ինկատի առնել, որ հայ ժողովուրդը այնքան ստորացած չէր, որ միշտ լռութեամբ տանէր իր դժոխային դրութեան ամբողջ ծանրութիւնը, — և այս բոլորից յետոյ կրկնում ենք մեր հարցը. մի՞թէ իրաւ որ հայկական հալածանքների համար «առիթներ» պիտի պահասէին Հայաստանում, եթէ յեղափոխական կազմակերպութիւնների գործունէութիւնը չլինէր:

Վերջապէս հայկական անօրինակ աղէտների համար անպատճառ «առիթներ» որոնողներին կ'առաջարկէինք փոքր ինչ կանգ առնել նաև ուրիշ կարգի մի շարք երևոյթների վրայ, որոնք հայ ժողովուրդի թոյլ ցնցումների դիմաց, գուցէ, աւելի մեծ, աւելի նշանաւոր «առիթներ» համարւեն:

Այդպէս՝ հայկական հարցով հետաքրքրուող բոլոր հեղինակները պնդում են, թէ տաճիկ կառավարութիւնը շատ լաւ գիտէր, որ հայ ժողովուրդը ապստամբութեան համար չունի «ոչ փող, ոչ զէնք», և այդ պատճառով հայերի յեղափոխական ձգտումներից նա երբէք երկիւղ չուներ: Հայկական հարցը վտանգաւոր էր Տաճկաստանի համար — ասում են միևնոյն հեղինակները — այն տեսակէտից, որ խնդրի հետ կապւած էր եւրօպական միջամտութիւն — մի հանգամանք, որ միշտ սոսկում է ազգել թիւրքերի վրայ: Եթէ մի րոպէ ընդունենք այդ տեսակէտը, այն ժամանակ պէտք է ընդունենք նաև, որ հայ յեղափոխական ձեռնարկների հետ չեն կարող համեմատուել իրենց աւելի գրգռիչ ազգեցութեամբ ոչ 1879 թւին Անգլիայում ծագած ծովային ցոյց անելու միտքը, ոչ մեծ պետութիւնների բազմաթիւ անգամ կրկնած պահանջները,

ոչ Սասունի քննիչ յանձնաժողովը, ոչ բարենորոգում-
ների ծրագիրը և ոչ էլ նոյնիսկ Մեծ Ծերունու շանթոյ
լեզուն, որի ուժը սուլթան Համիդ զգացել էր դեռ
1876 թւին:

Ահա թէ ինչ են ասում այդ կարգի երևոյթների մասին
մի քանի հեղինակներ: Դօքտօր Լէպցիւսի գրքում կար-
գում ենք.

«Հայ ազգարնակութեան ջնջման այդ ծրագիրը արդէն
տարիներեց ի վեր պատրաստւած էր: Եւ այդ ջնջման
գործը կատարելու համար նշանակւած գործիքները խորին
լուծեան մէջ աշխատում էին, երբ Բ. Դուռը հարկա-
զրուեց՝ Հայաստանի մէջ *ս է ֆ օ ր մ ն ե ր մ ա ց ն ե լ ու*
ս ա ի պ ո ղ ա կ ա ն պ ա հ ա ն ջ ի պ ա տ ճ ա ս ո Վ ա ր ա
զ ա ց ն ե լ ա յ դ շ ա ր ժ ու մ ր: Այն ժամանակ նա
որոշեց ամբողջ Եւրոպան իր զէմ ոտքի հանելու վտանգի
տակ՝ մէկ հարւածով բնաջինջ անել հայ ազգը ևւ վերջ
դնել այդ ատելի քրիստոնէութեան, որ անդադար Եւ-
րօպայի համակրու թիւնն երն էր գըր-
գ ու ու մ: Ջարգ երը կատարւեցին մի յայ-
տագրի համաձայն, որի մէջ աեղ երը,
վայրկեանը, զոհ երի ազգու թիւնը ևւ
մինչև ևւ ա ն գ ա մ ս պ ա ն ու թ իւ ն ն ե ր ի ու
թ ա լ ա ն ի ե ղ ա ն ա կ ը ն ա խ ա տ ե ս ն ւ ա մ է ի ն»:

Նոյն հեղինակը մի ուրիշ տեղ.

«Մի բարձր թիւք պաշտօնեայ՝ խօսելով հայկական
հարցի մասին՝ հետեւեալ կարծիքն է յայտնել. «մի
խաբիք կառավարութեան այն ա ն մ ի տ ա ե ղ ե կ ա
զ ի ը ն ե ր ո վ, որոնք ճիգ են թափում՝ կոտորածներու մեզը
հայերի վրայ ձգելու: Կառավարութիւնը հայերին պատ-
ժելու համար մի նախագծած ծրագիր ունէր. սուլթանը
զայրացած էր, որ իրեն ս ա ի պ ու մ է ի ն, ս է ֆ օ ր մ
ն ե ր տ ա լ ու ևւ զրա համար ս է ֆ օ ր մ ն ե ր ի ծ ր ա գ ի ր ը
ստորագրելուց յետոյ նա հրաման սուեց ջարդել հայերին՝
իր զօրութիւնը ցոյց տալու համար»:

Ականջ դնենք և Գրիօնին.

Անկողմնակալ դիտողը, որ ծանօթ է Տաճկաստանի եւ նրա բնակիչներին սոսկալի գրութեանը... համարձակ պիտի պնդէր, որ հրապարակային ժողովն երբ մէջ համակրութեան արտայայտութիւնները, որոնց հետեւում է կատարեալ անգործութիւն, ոչ միայն աւելի վատ են, քան իրական օգնութիւնը, այլ գրականապէս վնասակար են... Աւելի լաւ չէ՞ր լռէինք բոլորովին Սասունի կոտորածների առթիւ եւ աչքներս փակէինք մահու սարսափների առաջ, քան կատարութեան չափ գրգռէինք տաճկին (քննիչ մասնաժողով ուղարկելով) եւ ապա թողնէինք նրան կատարելապէս ազատ իր չարութիւնը քրիստոնեաների գլխին (թափելու)...

Ահա թէ ինչ է ասում և պ. Լաոուէր՝ ամերիկացի միսիօնար Գրիօնի գրքի առաջաբանում:

«Իմ հանողմունքն է, որ այդպիսի փոփոխութիւններ (բարեփոխում Տաճկաստանի) ներկայումս կարող են ձեռք բերել, եթէ քաղաքակիրթ աշխարհում արդէն առաջ եկած հետաքրքրութիւնը արտայայտի խելացի եւ զճոական գործողութեամբ: Յոյսս գրած այդպիսի գործողութեան վրայ, ես հրատարակում եմ այս փոքրիկ գիրքը, — ինչպէս եւ տաճկական տիրապետութեան զոհեմի օգտին անդի ունեցող ամբողջ ազիտացիան — միայն աւելի կը սաստկացնի ձեռնշուկը»:

Տեղը չէ, իհարկէ, այստեղ ասելու, թէ որքան իրաւացի է Գրիօնի գրքի հրատարակութիւնը «խելացի և զճոական գործողութեան» համար աւելի նպաստաւոր հանգամանք նկատել, քան հայ յեղափոխականը կարող էր համարել իր ուումը, որով նա որոտում էր

Թիւրքիայի սրտում, փաստերը արդէն կատարւել են, գիրքը հրատարակւել է, ուումքն էլ պայթել — երկուսն էլ՝ „յոյսները գրած քաղաքակիրթ աշխարհի խելացի և վճռական գործողութեան վրայ“... Տեղը չէ նաև քննել, թէ որ չափով արդար է Գիլլօնը, „վնասակար գտնելով Անգլիայի միջամտութեան փորձերը: Մեզ համար հետաքրքիրն այն է, որ հետևելով այդ հեղինակներին, մենք պիտի համարենք սուլթանին գրգռելու մի մի խոշոր „առիթներ“ նաև ռէֆորմների ծրագիրը, դեսպանների դիմումները, պարլամենտական հարցապնդումները, Սասունի քննիչ մասնաժողովը, հայոց դատին նւիրած բոլոր համակրական միտինգները, հրատարակութիւնները և այն և այլն: Գուցէ, այդ այդպէս էլ է, — մենք չգիտենք, բայց և այնպէս փաստն այն է, որ մենք դեռ չենք պատահել մի հայի, որը չուզենար հայկական հարցը միշտ յուզած տեսնել Եւրոպայի մէջ, մենք դեռ չենք յսել և ոչ մի ձայն, որը ուղղած լինէր մեր անբախտ ժողովրդի վիճակին արձագանք տւող ուէ քայլի դէմ, որ անշահախնդրաբար արել են օտարները: Եւ ո՞ւմ բերանը կը բացւէր այդպիսի մի դատապարտութեան համար: Սակայն տեսնում էք, որ շատ յարգելի անձնաւորութիւնների կարծիքով, այդ բոլորը նոյնպէս կարող էր „առիթ“ ծառայել. . . Այ՛ո, ընթերցող, երբ կան հիմնական պատճառներ, խնդրի հետ կապւած ամէն մի երևոյթ ինքնըստինքեան „առիթ“ կամ „պատուակ“ կարող է համարւել, և դրանով չէ, որ չափուում է երևոյթի նշանակութիւնը:

Ի՜նչ լուրջ մեր տեսակէտը չէ, այլ պատմական մի ճշմարտութիւն:

Մենք արդէն ցոյց տւինք հայկական աղէտների հիմ-
նական պատճառները և այսպէս կոչուած
առիթ կամ պատրուակների դերը այդ աղէտ-
ների մէջ: Թխտելով միանգամայն, թէ հայ յեղափոխական
շարժումը մեր անհամար կորուստների հիմնական պատ-
ճառների շարքում ուէ տեղ է բռնում, մենք ցոյց տւինք
նաև, որ այդ շարժումը նոյնիսկ առիթ կամ պատրուակ
համարել կարող է միմիայն սահմանափակ, պայմանական
մտքով — նոյնչափ, որչափ առհասարակ հայ ժողովուրդի
ազատութեան խնդրի հետ կապ ունեցող ամէն մի,
թէկուզ, շատ ցանկալի, թէկուզ բոլորից ջատագովուող
երևոյթ:

Այդպիսով պարզում է մեզ համար, որ այն բոլոր
գանգատները, որոնք այսօր ծանրանում են յեղափո-
խական շարժման կամ ձեռնարկների վրայ, իբրև կոտո-
րածների պատճառ կամ առիթների վրայ, — իսկապէս
ոչ այլ ինչ են, եթէ ոչ ամբոխային տրամաբանութեանը
յատուկ խառնիճաղանձ ճիչեր, որոնք անխուսափելի են
դառնում, երբ մարդիկ կամ անընդունակ են ըմբռնելու
այդ շարժման ամբողջ նպատակայարմարութիւնը և կամ
գաղափար չունեն նրա զարգացման համար անհրաժեշտ
պայմանների մասին: Հազար ու մի տեսակ ձեռնպահու-
թիւններ, պայմանական համաձայնութիւններ, „թէև“
ու „բայց“ — երի հետ համեմաւած համակրութիւններ կամ
հակակրութիւններ — դրանք բոլորը խղճուկ մտքի արտա-
յայտութիւններ են, որոնց տակ թագնւում է կամ
փափուկ կեանքի սիրահար հակայեղափոխա-
կանի դժգոյն ու անտարբեր դէմքը կամ թէ եսամոլ

ի մ ա ս տ ա կ ի աղքատիկ հոգին: Հարցերը ուրեմն այդպէս էլ դնենք — այսինքն՝ տեսնենք.

1. Որքան անխուսափելի, որքան բնական և միատա-
մանակ որքան ցանկալի էր հայ յեղափոխական շար-
ժումը, և

2. Որքան նպատակայարմար էր նրա գործնական ըն-
թացքը կամ ուրիշ խօսքով՝ նրա ընդունած տակտիկան
անմիջական կուոււմ:

Սկսենք առաջին կէտից:

Տաճկական կեանքի իսպառ անբարոյականացած, ան-
սահման տգէտ ու մոլեռանդ միջնորոտը կապւած այն
ընդհանուր ատելութեան և մշտական վտանգի զգաց-
մունքների հետ, որոնք միշտ դեր են խաղացել տիրող
տաճիկների և հպատակ քրիստոնեանների յարաբերու-
թիւններում, վաղուց դրել էր Թիւրքիայի քրիստոնեայ
ժողովուրդներին այնպիսի հակակուտուրական պայման-
ների մէջ, որ ամենավայրենի հալածանքներ, անօրինակ
հարստահարութիւններ, ստրկական իրաւազրկութիւն,
կատարեալ անապահովութիւն, աղքատութիւն, պան-
դրխտութիւն և այլն դարձել էին մշտնջենական երևոյթներ
նրանց կեանքում: Եւրօպական պետութիւնների աչքա-
ծակութիւնը դէպի քայքայւող Թիւրքիան լրացնում էր
երկրի խառն, անապահով, տազնապալից ներքին կեանքը, —
և ահա տաճկահպատակ քրիստոնեանների համար ըս-
տեղծւել էր իրերի մի դրութիւն, որի ճնշման տակ
նրանք՝ օրէցօր, ժամէ-ժամ՝ թարոյապէս աւելի և աւելի
պիտի ընկնէին, տնտեսապէս թշւառութեան հասնէին,
մտաւորապէս յետագիւմէին, քաղաքականապէս ջնջման
սիստէմի մշտական առարկայ լինէին:

Այդ էր պատճառը, որ տաճկական բռնութեան տակ Տեոդ Եռանաստանը յուզոււմ էր դեռ 18-րդ դարից սկսած. այդ էր պատճառը, որ Կրէտէ, Լիբանան, Սերբիա, Չերնօզօրիա, Ռումանիա, Բօսնիա, Հերցօգօվինա, Բօլղարիա, կուսելով, ոմանք հարիւր տարուց աւելի, ոմանք պակաս, իրենց մեծաքանակ զոհերի գնով միանգամայն ապացուցեցին, թէ որքան անտանելի էր տաճկական լուծը «խաղաղ» կեանքով ապրելու համար: Նոյն պատճառն էր, որ դեռ 1774 թւին, ռուսաց կայսրուհի Եկատերինա II-ի օրով՝ Քիւչիւք-Քայնարջիի դաշնագիրը դրեց տաճկահպատակ սլաւօններին ռուսաց կառավարութեան՝ պաշտպանութեան տակ: Նոյն այդ պատճառովն էր, որ դեռ 1815 թւին ռուս կառավարութեան մի ծանուցագիր եւրօպական պետութիւններին՝ առաջարկոււմ էր Եւրօպայի ընդհանուր հովանաւորութեան տակ զնեւ տաճկահպատակ քրիստոնեաներին: Նոյն այդ պատճառովն էր, որ Անգլիա, Ֆրանսիա, Աւստրիա և Պրուսիա 1854 ապրիլ 9/21-ին հաւարական արձանագրութեամբ պահանջոււմ էին «տաճկահպատակ քրիստոնեաների քաղաքական և կրօնական իրաւունքների ապահովում» — մի պահանջ, որ քիչ յետոյ, 1856 թւի մարտ 30-ին, Պարիզի դաշնագրով 9-րդ յօդուածը դարձաւ, իսկ 1860 թւի օգոստոս 3-ին իրաւունք տւեց Աւստրիային, Պրուսիային և Ռուսաստանին՝ կրկին առանձին արձանագրութեամբ, պարտաւորել Տաճկաստանին՝ «ընդունելու լուրջ վարչական միջոցներ՝ օսմանեան կայսրութեան ամէն դաւանութեան քրիստոնեաների կացութիւնը բարելաւելու համար»: Եւ այդպէս շարունակ՝ մինչև աւստրիական միսիստր կոմս Բէյստի առաջարկութիւնը 1867 թւին — բոլոր տաճկահպատակ քրիստո-

նեաներին տալ սահմանադրութիւն—և վերջապէս մինչև Բերլինի դաշնագիրը:

Նիւթի հանրածանօթ լինելը ստիպում է մեզ չծանրանալ յատկապէս հայ ժողովրդի նախայեղափոխական «երջանիկ» դրութեան նկարագրութեան վրայ:

Հարիւր հազարաւորների գաղթումներ սկսած 18-րդ դարից, բռնի գաղթականութիւն ուսաց սահմանակից նահանգներից դէպի Տաճկաստանի խորքերը (Սերգէյ Գլինկա — «Հայերի գաղթականութիւնները»), հարիւրաւոր գիւղերի ու վանքերի հողերի յափշտակում (1872 և 1876 թւի պատրիարքական տեղեկագիրներ), հարիւրաւոր ուրիշ գիւղերի կատարեալ աւերում (Վապոյտ գիրք, 1880 թ.), մասնակի կոտորածներ և հայերի ջնջման բացայայտ ծրագիր (Բայազէդ 1877 թ., Ձէյթուն ու Բեամիլ փաշա 1879 թ. և այլն), բազմաթիւ գաւառների բռնի իսլամացում (մանաւանդ Վարինի և Տրապիզոնի նահանգներում), կամաւոր կրօնափոխութիւն դէպի կաթօլիկութիւն ու բողոքականութիւն՝ նիւթական նպաստներ կամ օտար պետութիւնների հովանաւորութիւն ձեռք բերելու ակնկալութեամբ (ամբողջ թիւրքաց Հայաստանը), պարբերական սով տասնեակ հազարաւոր զոհերով (1880 թ.) հարիւր հազարաւոր չէրքէզների, տաճիկների, լազերի, քրդերի և թարաբամանների Հայաստան և Փոքր Ասիա տեղափոխելը — ահա նախայեղափոխական «երջանիկ» դրութեան մեծաքանակ «բարիքները», ահա այդ դժոխային դրութեան սոսկալի արտայայտութիւնները: Եւ այս բոլորի հետ ընթանում էր հայ ժողովրդի առօրեայ կեանքը—մշտական երկիւղի, անպատուութեան ու անվերջ զրկանքների այդ դժբախտ առարկան:

Բայց տեղ տանք օտար Հեղինակների մի քանի ընդ-
Հանուր գիտողութիւններին ևս:

«Դեռ 1855 թւին, ստում է Բրայս, գէնէրալ Սըր
Պ. Վիլհէլմ գրում էր, որ հայկական նահանգները ըստ
անհնայնի տառապում են սիստէմական անարդ հարստահա-
րութիւնների տակ, և բնորոշում էր թիւրք կառավարու-
թիւնը իրբեւ բանակալութեան մի այնպիսի մեքենայ,
որ իր նմանը չունի ամբողջ աշխարհում»:

Իրանգացի դօկտօր Ռաջտ, Սիւրիայում երիցական
առաքելութեան մեծաւորը, 1877 թւին իր հրատարակած
մի գրքում իմիջի այլոց ասում է.

«Տաճիկները աւերմունք են գործում ոչ միայն վայրագ
կատաղութեան մէջ, այլև կատարեալ սառնասրտու-
թեամբ և միանդամայն համաձայն իրենց իրաւագիտու-
թեան, օրէնսդրութեան ու հաւատին. . . թիւրք կայս-
րութեան մէջ հազիւ թէ գտնւի մի գիւղ, որ չունե-
նայ իր վարձուրելի յիշողութիւնները, — այնքան վարձու-
րելի, որ անկարելի է մտածել կամ խօսել նրանց մասին»...

Վոտորածները, գրում է Դիլլօն, «երկնքի ողորմութիւն
են», համեմատած հայերի «ամէն օր եւ այ գոթոխային
դրութեան հետ»:

«Երգմամբ հաւատացնում ենք ձեզ, — գրում են խնուօցի
հայերի 36 ներկայացուցիչները անգլիական ազգին ուղղած
խնդրագրում, — որ Սասունի մէջ տեղի ունեցած կոտորածը
միմիայն մի կաթիլ է հայկական արեան ու վ-
կիան ոսոսում, որ հետզհետէ ևւ լռելեայն թափւում
է ամբողջ օսմանեան կայսրութեան մէջ»...

Կրկին յիշեցնելով, որ Բօլէն ծակմէն հրատարակել
է իր գիրքը Հայաստանի աղէտներից շատ առաջ, բերում
ենք նրանից հետևեալ տողերը.

«Զի կարելի երևակայել աւելի սարսափելի
դրութիւն, քան թշւառ, ստրկացած, անպատւած և

կեղեքւած հայ ժողովրդի գրութիւնը... Ամէն տեղ,
ամէն քայլափոխում աւերման ու բռնակալութեան
ոգին արտայայտում է հազարաւոր ձևերով և եթէ
մեր արևմտեան նոյնիսկ ամէնահամբերատար ժողո-
վուրդներից մէկին վիճակէր ենթարկւել այդ աղէտնե-
րին, թէկուզ միայն մի օրւայ ընթացքում, իսկոյն դուրս կը
թռչէր նրա կրծքից զ ա յ ր ո յ թ ի ա ղ ա զ ա կ...
Եւ այլն և այլն:

Այսպէս են խօսում նախայեղափոխական «երջանիկ»
չըջանի մասին փաստերը, այսպէս է խօսում կեանքը,
այսպէս են վկայում թիւրքաց Հայաստանի կեանքին
ծանօթ մարդկանց հարիւրից իննսուն ինը:

Բայց ի՞նչ է ասում մեզ այս բոլորը: Միակ եզրա-
կացութիւնը, որ մենք կարող ենք անել — այդ այն է, որ
հայկական կեանքը վաղուց եկել, կանգ էր առել մի խոշոր
դիլէմայի առաջ. — կամ անպայման ընաջնջում իբրև
մի ամբողջութիւն, իբրև մի ազգութիւն, իբրև մի հայրենիքի
տէր ժողովուրդ, կամ թէ դիմագրութիւն՝ կեանք, պատիւ,
ստացւածք, տուն, հայրենիք, ամէն ինչ բռնաբարող ուժի
դէմ: Միջին ուղիների սիրահարները, ինչպէս վայել է իրենց,
իհարկէ, այստեղ էլ գտնում էին մի երրորդ ելք, կարծե-
լով, թէ հայ ժողովուրդը իր կուլտուրական հակումների
չնորհիւ յաղթող պիտի հանդիսանայ իրեն շրջապա-
տող տխուր մթնոլորտում, առանց զէնքի դիմելու և
գրանով պիտի աւետէ արար-աշխարհին մի նոր սկզբ-
բունք, որ մարդկային պատմութիւնը իր ամբողջ տա-
րածութեան վրայ միշտ անտես է արել — այն է, որ
կարելի է ազատութիւն ձեռք բերել լուկ «քաղաքակրթ-
թական խաղաղ պատերազմով»:

Սակայն օրէցօր աւելի և աւելի ծանրացող դառն

իրականութիւնը մի կողմից՝ և միւս կողմից այդ սոսկալի դրութեան գիտակցութիւնը հայ հասարակութեան այն մասերում, որոնց սթափեցրել էր մեր մտաւոր շարժումը, հետզհետէ գալիս էին համոզելու հայերին, որ նրանք լաւ կ'անեն, եթէ առայժմ հրաժարեն այդպիսի մի մեծ ծառայութիւնից յօգուտ ընդհանուր մարդկութեան, և որ ընդհանրութեան մեծ ծառայութիւններ մատուցանելու համար հարկաւոր է նախ պաշտպանել և ապահովել սեփական գոյութիւնը: Եւ երբ դրութիւնը ստանում է այդպիսի սուր կերպարանք, երբ պարզում է, որ իրերի ընթացքը ինքնըստինքեան դէպի կորուստ է տանում, բնական չէ՞ արդեօք, որ մի ժողովուրդ այդպիսի հանգամանքներում ընտրի այն, թէ և վտանգաւոր, բայց և յուսատու ուղին, որ զոհերի հետ միասին խոստանում է նաև ունէ ապագայ: Առաջին դէպքում անխուսափելի է անպատիւ, ամարդի, ժողովուրդի անհուն ստորութիւնը ապացուցանող անպայման կորուստ. երկրորդը միայն մի վեհ, մի փայլուն, մի սրբազան ու իսկ է պայմանական աջողութեամբ: Ապահով և պատուաւոր կեանքի հզօր բնագոյր—այն յաւիտենական, հրաշագործ բնագոյր, որով ապրում ու գործում են ժողովուրդները, թէ և շատ թուլացած, բայց բարեբախտաբար դեռ իսպառ չէր բթացած հայ ժողովուրդի որոշ տարրերի մէջ և միմիայն այդ բնագոյր բաւական էր արդէն մահարեւ դիլէմայի դիմաց՝ ինքնապաշտպանութեան բոլոր զգացմունքները նրանց մէջ լարելու համար: Բայց մենք ունեցանք և մի ուրիշ զօրեղ նպաստաւոր հանգամանք, որը վերջապէս պիտի որոշէր, արագացներ հայութեան ելքը այդ տատանման շրջանից: Այդպիսի մի հանգամանք եղաւ Բերլինի դաշնագիրը իր 61-րդ յօդ-

ւածով: Եթէ մինչև այդ յօդւածը՝ ջնջման հեռանկարից խուսափել ուզենալով, ջլատւած, տկարացած և իր տխուր անցեալի բազմաթիւ բացասական հետքերը կրող հայը կարող էր նաև վախենալ ռիսկի վտանգից, — այդ յօդւածով հայութիւնը իրեն արդէն դաշնակից է տեսնում եւրոպական ամբողջ վեց պետութիւններ, և աջողութեան պայմանական յոյսերը ուղղակի հաւատի պիտի փոխարկուէին: «Je m'insurge, donc je suis» — գոռում էր եւրոպան և հայերի մէջքին կանգնում: Տատանումը այլևս անկարելի էր, — և ահա ժողովրդի սրտից պայթում է յեղափոխական շարժումը, իր հոսանքի մէջ ընդգրկելով ժողովրդական հերոսների և գրական գործիչների մի ամբողջ շղթայ Մայր երկրում և եւրոպայում:

Հարցնում ենք ուրեմն, բնական էր, ցանկալի՞ էր վերջապէս հայկական յեղափոխական շարժումը, թէ ոչ: Արդեօք յեղափոխական հոսանքը ինքը հարազատ և միակ յուսատու գաւառն էր իրական կեանքի, թէ նրա վրայ արւած արհեստական մի պատւաստ:

Եւ ընդհակառակը՝ նթէ կայ մի բան, որի մասին կարելի է ասոսուալ, — արդեօք այն չէ՞, որ շատ ուշ ստեղծւեց այդ շարժումը մեր մէջ և որ դեռ մինչև օրս էլ մենք շատ թոյլ ենք այդ միակ յուսատու ճանապարհի վրայ: Գոնէ օտարները և նոյնիսկ տաճիկ կառավարութիւնը շատ բնորոշ են, խօսում այդ մասին:

Մենք արդէն վերը ցոյց տւինք որ օտար հեղինակներից ոմանք «հայ յեղափոխական գաղափարը» ուղղակի անւանում են «սարսափելի կացութեան հետեւանք»:

Բայց լսենք էլի մի քանիսներին և ամէնից առաջ՝ հեղինակաւոր թիւրք կառավարութեան:

1839 թւին սուլթան Աբդուլ Մէջիդի ստորագրու-

Թեամբ հրատարակած «Թանգիմաթը» հռչակում էր.

«Ոչ ոք, որքան էլ իրնէ խաղաղասէր լինի, չի կարող չգիմել բռնի միջոցն երի, երբ վրտանգում են նրա կեանքն ու պատիւը»:

Հռչակաւոր կանօնիկոս Մակկօլ.

«Ես իսկոյն կրնկարագրեմ հայերի ջնջման այդ դիւային ծրագրի զարդագումը: Իսկ այժմ թոյլ կրտամ ինձ անկեղծօրէն ասել, որ հայերը եթէ ոեւէ չնչին յոյս ունէին աջողութեան վրայ, ոչ միայն իրաւունք պիտի ունենային, այլև իրենց սրբազան պարտականուն ռեթիւնը պիտի համարէին ապստամբել եւ տապալել այն զժոխային կառավարութիւնը, որը դատապարտում է նրանց՝ մարդկային տարեգրութիւնների մէջ երբեւիցէ պատահած ամէնաստորացուցիչ, ամէնաղաթման եւ յուսազուրկ ստրկութեան. . . Բարձր Իրան նման աւագակային կառավարութեան զօները պարտաւոր չեն ամենեւին հաւատարիմ լինել նրան եւ իրաւունք ունեն խորտակել այդ կառավարութիւնը առաջին յարմար դէպքում. . . Ազգերի ամենամեծ շահը խաղաղութիւնը չէ, որովհետեւ կարելի է խաղաղութիւն վայելել եւ անարդ վատութեան մէջ, ուրանալով ամէն սրբութիւն»:

1880 Թւի սեպտեմբեր 23-ին բրիտանական հիւպատոս Էվէրստ գրում էր Կարինից կոմս Գրանվիլին.

Միմիայն ժողովրդի համբերութեամբ, երկչոտութեամբ, եւ նրա զանազան խաւերի մէջ եղած կապերի թուլութեամբ կարելի է բացատրել այն հանգամանքը՝ որ արեւելեան սանջակները անցեալ տարի (1879) հարկերը բաժանելու միջոցին չապստամբեցին կառավարութեան դէմ, ոտքի կանգնելով իբրեւ մէկ մարդ»:

Տասը տարի այս խօսքերից յետոյ, այսինքն 1890 Թւին՝ նոյն տեղից գնդապետ 2 արմասյ դ արդէն հաղորդում էր.

«Վերջին տարիներս Կարինի եւ ուրիշ գաւառներում

կազմակերպւող զազանի ընկերութիւններն ու կօմիտէները, գէնք ձեռք բերելու դիտաւորութիւններն ու փորձերը, վերջին ժամանակներս Վանում եւ շրջակայքում տեղի ունեցած դէպքերը—այդ ամէնը գոյց է տալիս, որ խսկապէս գոյութիւն ունի խորին դժգոհութիւն: Եւ իրաւ, տ ա ր օ ր ի ն ա կ կը լինէր սպասել ուրիշ բան, քան գ ժ գ ո հ ու թ ի լ ը ն):

Լսենք և հեղինակաւոր Բօլէն Թակմէնի կարծիքը այդ մասին.

«Բօսնիան, Հերցօգօվինան, Բուլղարիան 1856 թւի դաշնագրում արտօնեալ տեղ չէին բռնուած Այնտեղ նրանք մինչև անգամ չեն էլ յիշատակւած, ինչպէս չեն յիշատակւած կրէտէն եւ Լիբանանը: Ինչո՞ւ ուրեմն Եւրօպան եռանդուն կերպով շահագրգռեց այդ երկրների քրիստոնեայ ազգաբնակութիւններով դեռ 1878 թւից շատ առաջ եւ ոչ մի պահանջ չներկայացրեց Հայաստանի քրիստոնեաների վերաբերմամբ: Դժբախտաբար, ես ոչ մի բացատրութիւն չեմ գտնում այս տարբեր վերաբերումների համար գէպի դանագան ազգերը, բացի այն, որ հայերը փոխանակ ապստամբելու բաւականացան միայն գանգամներով. . . Եթէ տաճկական հալածանքները ճնշւած հայերի մէջ խոր տենչանք են զարթեցնում ստանալ ոչ միայն անձնական ապահովութիւն, այլև ընդհանուր ինքնաւարութիւն այն հողի վրայ, ուր իշխել են նրանց նախնիքները, եւ դաշնագիրի գծած սահմաններում,—գա ամենեւին արդիւնք չէ սովորական ինտրիգի, այլ մի պատւաբեր երեւոյթ մարդկային բնաւորութեան համար, որը արիանում է ազէաների մէջ եւ չի բաւականանում գոյութեան լոկ նիւթական գոհացումով): . .

Վերջապէս 1894 թւի փետրւար 20-ին Փրանսիական զեսպան Վամբօն իր կառավարութեանը տւած մի զեկուցման մէջ իմիջի այլոց ասում է.

«Իմ անցեալ տարւայ զեկուցումները ծանօթացրին

կեսարիայում, Մարգարանում, Անգորայում տեղի ունեցած դէպքերի հետ... Իր անզթութեամբ Բարձր Դուռը սրբագործեց հայկական շարժումը, որը այժմ արդէն ունի իր նահատակները»... :

Այդպէս ուրեմն — եթէ ձեռնկերպենք նոյնիսկ վերը յիշած մարդկանց բառերով — տիրող հանգամանքներում հայկական շարժումը ոչ միայն անխուսափելի էր, որովհետեւ այդ էր պահանջում «իրերի կացութիւնը», ոչ միայն իրաւացի էր, որովհետեւ ուէէ ազգ պարտաւոր չէ անպատճառ հաշտուել «ամէնադատան ստրկութեան» հետ կամ մնալ «անարգ վատութեան» մէջ. ոչ միայն շատ հասկանալի էր, որովհետեւ «տարօրինակ» կը լինէր դրա փոխարէն տեսնել ուրիշ երևոյթ. ոչ միայն նպատակաշարժաւ էր, որովհետեւ հայը «առանց ապստամբելու» չէր կտրող իր դրութիւնը ուրիշ կերպ բարոքել, — այլ և դեռ վաղուց սպասելի էր, որովհետեւ միմիայն «հարկերի բաժանումը բաւական էր հայերին ապստամբեցնելու համար», այլև միանգամայն պատւաբեր երևոյթ էր, որովհետեւ նա ապացուցանում է, թէ հայերի մէջ դեռ չեն մարել «մարդավայել բնաւորութեան» բնազդները, վերջապէս այսօր նա սրբագործուած մի դատ է, որովհետեւ ունի իր բազմաթիւ «նահատակները» — դժբախտ ժողովրդի բարօրութեան գաղափարի համար զոհուած նահատակներ... :

IV

Դիմենք այժմ գործնական ընթացքին, որ արտայայտուել է հայ յեղափոխական շարժման մէջ:

Կանգ առնելով ամէնախոշոր գծերի վրայ, մենք պիտի

յիշենք այստեղ Պօլսում կատարած ցոյցերը, Սասունի, Վանի և Զէյթունի շարժումները, ռուս և պարսկական սահմաններից արւած արշաւանքները (Վուկուենան և Խանասոր), ապա մի ահագին շարք համարեա ամէն տարի կրկնող կռիւների, որոնք կապուած են եղել զէնքի փոխադրութեան, հրոսակային խմբերի գործունէութեան կամ կազմակերպչական այլևայլ գործերի հետ և վերջապէս բազմութիւ տէնօրական գործողութիւններ, ուղղուած պաշտօնական անձերի և մանաւանդ հայ լրտեսների ու դաւաճանների դէմ: Ընդհանրացնելով այս յեղափոխական երևոյթները, մենք կը տեսնենք, որ հայ յեղափոխական կուսակցութիւնները ցոյցեր ու արշաւանքներ են արել, ժողովօրդական շարժումներ են առաջ բերել, զէնքի փոխադրութեամբ են զբաղուել, աշխատել են կազմակերպել ժողովուրդը կուռի համար, տէնօր են կատարել:

Ո՞րն է սրանցից աւելորդը, վնասակարը, կորստաբերը:

Վերը բազմութիւ օտար հեղինակների հետ միասին մենք տեսանք, որ հայկական շարժումը մի բնական, մի շատ հասկանալի և միաժամանակ միանգամայն նպատակայարմար երևոյթ է մեր կեանքում: Եթէ մենք չենք սխալուել այդ եզրակացութեան մէջ, ուրեմն, որոշելով հայկական շարժման էութիւնը և նպատակը, մենք կունենանք պատրաստ կրէտերիում՝ դրած հարցումին պատասխանելու համար. ա ն մ ի տ, պ ա Ր ս ա լ ե լ ի, անպայման բացասական պիտի համարուեն այն ձեռնարկները, որոնք չեն համապատասխանում այդ որոշումից բղխող պահանջներին, և ընդհակառակը՝ օգտակար, ցանկալի, դրական նրանք, որոնք համապատասխանում են այդ պահանջներին:

Ի՞նչ էր ուրեմն մեր շարժման նպատակը: — Ուրիշ

ոչինչ, եթէ ոչ կազմակերպւած ու բռնի
ուժով կուել, բողոքել Տաճկաստանում
տիրող սպանիչ կարգերի դէմ մինչև
որ վնց պետու թիւններէ երաշխաւորած
միջամտու թեամբ այդ կարգերը դէպի
լաւը կը փոխեն:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, կազմակեր-
պու թիւն, բռնի ուժ, բողոք և վերջապէս
երօպական միջամտու թիւն առաջ բերելու
նկատումները այս որոշման անհրաժեշտ տարրերն
են կազմում: Կանգ առնելով այս տեսակէտի վրայ, մենք
կարող ենք վերև դրած հարցը՝ թէ „ո՞րն է մեր յեղա-
փոխական անցեալում տեղի ունեցած ձեռնարկներից
աւելորդը, վնասակարը, կորստաբերը“ — վերածել այս
ձևի. ո՞րն է դրանցից զուրկ այս տարրերից, ո՞րն է
արդեօք դուրս մնում իբրև չափս ընդունած մեր որոշումից:

Բաւական է ամէնաթեթև մի հայեացք ձգել յիշեալ
գործառնութիւնների վրայ և մենք կը տեսնենք, որ
ներանցից իւրաքանչիւրը ունի մեր որոշման բոլոր տարրերը:

Յոյցերը, արշաւանքները և հրոսա-
կայի ն խմբերը կազմակերպում են կուռղ ուժերը,
ժողովրդականացնում են բողոքի ճանապարհը, կրթում
են ժամանակակից սերունդը, վառ են պահում ժողովրդի
գիմադրական տրամադրութիւնը, հարածում են թըշ-
նամու հեղինակութեանը թէ ներսում՝ սեփական հպա-
տակների աչքում, և թէ դրսում՝ օտարների առաջ,
վնասում են կառավարչական շահերին, զբաղեցնում են
երօպական հասարակական կարծիքը և դիւանասները,
այսինքն առաջ են մղում միջամտութեան գործը, առնւազը
[Թոյլ չեն տալիս խնդիրը մոռացութեան մատնելու, թէ

իրբև միջազգային քաղաքական խնդիր և թէ իրբև աշխարհիս բոլոր ծայրերում ցրած հայերիս համար ընդհանուր ազգային դատ:

Ժողովրդասիր շարժումները, իրբև յեղափոխական լայն ձեռնարկներ, իրենց ազդեցութեամբ, իհարկէ, աւելի նշանաւոր են: Ամէն տեղ և ամէն ժամանակ ապստամբութեան գաղափարը կապւած է եղել այդ տեսակ շարժումների հետ և այնքան վճռական դեր են ունեցել դրանք ժողովուրդների պատմական կեանքում, որ ազատութեան անունով սկսւած կռիւների գործնական նպատակն են կազմել միշտ: Պարզ է ուրեմն, որ հայկական շարժումը ևս չէր կարող խուսափել կուրի այդ ամէնաէական տարրից:

Ձէնքերի փոխադրութեան, կազմակերպչական հազարումի հոգսերի և կատարւած տէնօրական գործողութիւնների մասին խօսելն արդէն աւելորդ է, որովհետև դրանք անհրաժեշտ միջոցներ են վերոյիշեալ գործառնութիւնների համար և յեղափոխական ամէն-մի ծրագրում անշուշտ տեղ պիտի բռնեն:

Ահա՛ մի քանի խօսքով՝ մեր քննադատութեան ենթակայ ձեռնարկների դրական կողմերը: Ընթերցողին ենթ թողնում լրացնել այս ընդհանուր գծերը կենդանի օրինակներով, որոնք կը պարզեն նրան, թէ որքան յեղափոխական յայտնի ձեռնարկները իրենց ժամանակին մեծ ազդեցութիւն են ունեցել մի կողմից՝ հայ հասարակութեան, հայ ժողովրդի տրամադրութեան վրայ, ներշնչելով նրան ոգևորութիւն և հետաքրքրութիւն դէպի մեր դատը, մեր կռիւը, յեղափոխական կուսակցութիւնները և այլն, և միւս կողմից՝ եւրօպական զիւանագիտու-

Թեան վրայ, ստիպելով նրան որոշ դէպքերում սեղանի վրայ գնել մոռացութեան մատնւած հայկական խնդիրը և ուրիշ դէպքերում՝ յատուկ կօնֆերանսներ կազմել այդ խնդիրը արծարծելու համար:

Բայց գուցէ կան յեղափոխական կոււի ուրիշ միջոցներ, որոնք աւելի արդիւնաւէտ կաբող էին լինել, քան մեր յիշածները: Թող ցոյց տան մեզ ովքեր գիտեն այդպիսիք: Իսկ մենք կարծում ենք, որ մեր յեղափոխական շարժումը, իմիջի այլոց, հէնց նրանով էլ արտայայտեց իր կենսունակութիւնը, իր ճկունութիւնը և ամէնաանպատ պայմաններին յարմարելու իր ընդունակութիւնները, որ նա կարճ ժամանակամիջոցում՝ ըմբռնեց կուի բազմազան միջոցները՝ սկսած համեմատաբար խաղաղ բնաւորութիւն ունեցող բողոքներից մինչև ուժանակի գործածութիւնը, սկսած անհատական տեւորներից մինչև ժողովրդական շարժումները:

Գուցէ, վերջապէս, այս բոլոր միջոցներին դիմելու կարիք չկա՞ր. գուցէ, պէտք էր հետևել ուէ աւելի սահմանափակ ուղղութեան, որպէս զի չվատնելով մեր յեղափոխական ուժերն ու միջոցները բազմաաեսակ գործերի վրայ, մենք կենտրոնացնէինք նրանց որոշ խնդիրների շուրջը: Տեսնենք:

Համաձայն այն նպատակին, որ մենք յատկացրինք հայկական շարժման, յեղափոխական գործունէութեան եղանակը պիտի ինկատի ունենար, իմիջի այլոց եւրոպական միջամտութիւն առաջ բերելու բոլոր հնարաւորութիւնները: Ահա այն պայմանները, որոնք անհրաժեշտ էին դրա համար. հարկաւոր էր, որ մեր բողոքները տեղի ունենային մեծ պետութիւնների աչքի առաջ, որ այդ բողոքները իրենց խիստ բնաւորութեամբ, ընդունակ լինէին արտայայտելու կացութեան ամբողջ ծանրութիւնը:

որ դրանք կրէին սիստէմատիկ և ոչ թէ պատահական
երևոյթներու բնաւորութիւն. որ հայութիւնը երևար
իրբև մի ուժ, որին արհամարհել չէ կարելի, որի գոյու-
թիւնը կարող է նպաստաւոր լինել եթէ ոչ մարդկային
քաղաքակրթութեան, գոնէ այս կամ այն պետութեան
համար և որի անհանգիստ, յեղափոխականօրէն բորբո-
ւած տրամադրութիւնը, ընդհակառակը, միանգամայն
մըասակար՝ պետութիւնների շահերին: Աւելացրէք այս
բոլորին և այն պահանջները, որոնց պէտք է գոհացում
տայ ամէն-մի կազմակերպութիւն, որ ձգտում է որոշ
դեր կատարել ընթացիկ կեանքի մէջ — այն է՝ մտնել
իր ուժերն ու միջոցները ըստ կարելոյն խնայողաբար,
գրաւել բոլոր նպաստաւոր տարրերն ու հոսանքները,
կանոնաւորել նրանց ընթացքը, — և դուք կը հասկանաք,
որ մեր յեղափոխական անցեալում գործադրած կուրի
միջոցների ոչ մի մասը ոչ պէտք էր և ոչ էլ կարելի էր
զոհել յօգուտ միւսների:

Յ ո յ ց ե Ր և արշաւանքներ կատարելով,
յեղափոխականները գործում էին Պօլսում և Տաճկաս-
տանի սահմանների վրայ: Պօլսի նշանակութիւնը կուրի
գործի մէջ յայտնի է արդէն և մենք չենք ծանրանայ
այստեղ դրա վրայ: Պօլսում յեղափոխականները ոչ միայն
Տաճկաստանի սրտումն էին, այլև համաշխարհային նշա-
նակութիւն ունեցող մի կէտում, ամբողջ Եւրոպայի աչքի
առաջ, նրա շահերի անմիջական թատերաբեմում: Մի
ատրճանակի պայթում այնտեղ աւելի է լսելի աշխարհին,
քան հարիւրաւոր հրացանների որոտումը երկրի խորքերում:
Սահմանների վրայ գործելով, մենք նոյնպէս խուլ ան-
կիւններում չէինք գտնուում, այլ այնպիսի վայրերում,
որ բնականաբար պէտք է շահագրգռէինք առնւազը

երկու պետութիւն: Յուցական այդ երկու տեսակի ձեռնարկները բաւարարութիւն են տալիս նաև տնտեսաբար ու սիստէմատիկ, տեղողական կերպով կռիւր տանելու պայմաններին, որովհետև դրանք պահանջում են համեմատաբար աւելի քիչ ուժ և միջոցներ, իսկ նախապատրաստութեան համար աւելի քիչ ժամանակ — մի հանգամանք, որ ոչ միայն կարևոր է առհասարակ գաղանի ձեռնարկների աջող իրագործման համար, այլև էական նշանակութիւն ունէր այնպիսի օրերում, երբ վստահ լինելով Եւրոպայի օգնութեան վրայ, յեղափոխական կուսակցութիւնները պարտաւոր էին ձգտել ըստ կարելոյն շուտ բարւոքել տալու ժողովուրդի ծանր դրութիւնը: Հասկանալի է նաև, որ այդ ձեռնարկները չէին հակասում երկրի գործունէութեան պահանջին. ընդհակառակը՝ նպատակ ունենալով թեթևացնել երկրի մէջ տիրող ծանր պայմանները, դրանով միայն պէտք է դիւրացնէին և բնականաբար առանձին զարկ տալին երկրի գործունէութեան:

Վան սակայն մարդիկ, որոնք ընդունելով ցուցական գործունէութեան կարևորութիւնը մեր շարժման սկզբնական շրջաններում, հերքում են յետագայ ցոյցերի նշանակութիւնը: «Քանի որ մեր հարցը հերթական էր, պէտք չէր այս կամ այն ինչ ժամանակ վերստին գրգռել թշնամուն» — ասում են դրանք համոզւած շիշտով, կարծես թէ երբ մի հարց հերթական է լինում, այդ արդէն նշանակում է, որ նա այդպէս էլ կը մնայ կամ թէ անպատճառ կը լուծւի աջողութեամբ: Արդեօք այդ մարդիկ հարցրել են իրենց երբևիցէ, թէ ժամանակի ընթացքում, շնորհիւ քաղաքական ուժերի և շահերի այս կամ այն դասաւորման, քանի-քանի հերթական

Հարցեր դիւրութեամբ ծաւելի մի կողմն են դրուել կամ մինչև իսկ մարել են յաւիտեան: Եւ Հէնց վերջին 20 տարւայ աննշան ժամանակամիջոցում մի թէ քիչ առիթներ ունեցանք մեր սեփական աչքով տեսնելու, թէ որպիսի անգութ խաղերի մատնեց մեր դատը: Տեղն է յիշատակել այստեղ հետեւեալ բնորոշ փաստը: Տաճիկ կառավարութեան երեք պատուիրակներ մին միւսի ետեւից ժընէվ եկան՝ Հէնց այդ «աւելորդ», «անմիտ» ձեռնարկներից յետոյ, 96, 97 թւականներին, և որ զլիսուորն է՝ իրենց առաջարկութիւնների մէջ նրանք միակ պահանջ էին դնում՝ դադարեցնել յեղափոխական գործունէութիւնը Պօլսուսում, իսկ բուն երկրի մասին ոչ մի պայման, ոչ մի խօսք: Ուրիշ հանգամանք: Կան բուպէնի ժողովուրդների կեանքում, երբ կարելի է հաշուել ամէն բանի հետ, բայց ոչ լուութեան: Կան վայրկեաններ, երբ լուութիւնը բարոյապէս բնորոշում է մի ամբողջ շարժում, մի ամբողջ ժողովուրդ, և այդպիսի վայրկեաններից էին այն ժամանակները, որոնց հետ կապւած են ներկայումս դատափետուող ցոյցերը: Երբ 95 և 96 թւականներին արեան մի ամբողջ ծով էր պատել Հայաստանին և երբ հայութիւնը, եթէ նա ստրկածին արարածների միզանգւած չէր, պիտի բռնկւած լինէր վրէժի միակ հասկանալի զգացումով, պիտի դառնար վրէժի մի անվերջ աղաղակ, — այդպիսի մի վայրկեանում, ասում ենք, լուութիւնը պիտի նշանակէր միայն և միայն ամբողջ ազգի կատարեալ բարոյական անկումը և յեղափոխական գաղափարի, յեղափոխական շարժման կատարեալ սնանկութիւնը: Փառք ուրեմն այն հերոսներին, որոնք ոչ միայն այդ գարշելի լուութիւնը փոթորկեցին ու հայ ժողովուրդի ամէնաարդար, ամէնաէական զգացումների թարգմանը

եղան, այլև միանգամայն ապացուցեցին, որ նոյնիսկ ծանր օրերում նրանք ընդունակ են հաշուել իրենց քայլերը և թշնամուն հարւածելու համար այնպիսի ձեռնարկներ ծրագրել ու իրագործել, որոնք օտար լրագիրներում տեղ-տեղ նոյնիսկ «հանճարեղ» անւան արժանացան:

Սակայն բաւականանալ միմիայն ցուցական ձեռնարկներով, այսինքն միմիայն երկրից դուրս կատարւող արշաւանքներով ու ցոյցերով—նախ՝ անկարելի էր իրերի գրուծիւնը անտանելի էր հէնց երկրի մէջ, ճնշումներն ու հալածանքները զգալի էին հէնց այնտեղ, ուր ապրում է ժողովուրդը: Եւ բնականաբար երկրում արդէն դիտուում էին յեղափոխական հոսանքներ, արդէն հանդէս էին եկել հոգւով բարձր և ազատութեան կրակով վառւած ուժեր, որոնք պէտք է կատարէին և կատարում էին իրենց գործը — ձգտում էին կազմակերպւել և կուել (Յունօներ, Չաթօ-Շէրօներ, Արաբօներ): Յեղափոխականների կապը դրանց հետ, հետևաբար, նոր երևոյթներ չէր ստեղծում, այլ նպատակ ունէր միայն ամբողջացնել ցրւած ուժերը, կանոնաւորել նրանց ընթացքը և այս կամ այն ձևի իր օգնութեամբ դիւրացնել նրանց գործը—մի դեր, որ յեղափոխականների անհրաժեշտ պարտաւորութիւնների շարքն էր մտնում:

Աւելի ևս: Յուցական գործունէութեամբ ոչ միայն չէր կարելի, այլև պէտք չէր բաւականանալ: Ոչ մի հասարակական շարժում չէ կարող յարատւել և մասնաւանդ յաղթական վախճան ունենալ, եթէ նա ժողովրդականացած չէ ազգի մէջ, նրա ընդարձակ խաւերում: Այնպիսի մի մեծ խնդիր, ինչպիսին է հալածւող մի ժողովրդի ազատումը ուժեղ բռնակալի ճիրաններից, չէ կարող աջողութեամբ պսակւել, եթէ նա սահմանափակի

ժողովրդից կտրւած ուէ հասարակական դասակարգով: Այդ մէկ: Երկրորդ՝ ոչ մի ազատութիւն գին չէ կարող ունենալ ժողովրդի համար և չէ կարող հեռւաբար պահպանւել, եթէ ինքը ժողովուրդը չէ գիտակցում ազատութեան պահանջը և չէ մասնակցում նրա անունով յայտարարւած կուին. օդից ընկած ազատութիւնից՝ անգիտակից ժողովուրդը չէ օգտուում և հեշտութեամբ կորցնում է այն առաջին պատահած դէպքում: Երրորդ՝ ոչ մի ժողովուրդ չէ կարող իր անվերջ հեծեծանքներով իրական օգնութիւն սպասել արտաքին աշխարհից, կուի որոտումները, նւիրական գաղափարով սրբագործւած ռազմի աղաղակներն են, որ արտայայտում են նրա կենսունակութիւնը, նրա հոգեկան արժանիքները. դրանք են, որ ներշնչում են յարգանք դէպի մի ազգ և երաշխաւորում են նրա համար թէ համակրութիւն և թէ ինքնուրոյն պարելու բարոյական իրաւունք: Չորրորդ՝ սոսկ ցուցական գործունէութիւնը կարող էր ընդունւել արտաքին աշխարհի կողմից իբրև միայն մէկ խմբի, երիտասարդութեան մի որոշ մասի գործ, որ կապ չունէր ժողովրդի հետ, և այդպիսով կարող էր ջնջել հայկական բողոքի ամբողջ նշանակութիւնը: Թիւրք կառավարութեան կամ եւրօպական շահերին վնասելու գործը միտք է ստանում այն ժամանակ միայն, երբ նայում են յեղափոխականների վրայ իբրև ժողովրդային տրամադրութեան արտայայտիչների վրայ. հակառակ դէպքում՝ վնասուողները, «հայկական հարց» կոչւածը մի կողմ թողնելով, կարող են իրենց նպատակ դնել՝ համերաշխ ուժերով վերջ դնելու իրենց հանգստութիւնն ու շահերը ձեռնահարող մի «վնասակար տարրի»: Այն ինչ՝ երբ Պօլսում պայթող յեղափոխական ձեռնարկի հետ միաժամանակ

երկրի մէջ նկատուած է ժողովուրդի յուզած տրամագրութիւնը, այն ժամանակ առաջին երևոյթը ընդունուած է միայն իբրև երկրորդի արձագանք, և բնականաբար „փնասակար տարրի“ գաղափարը տեղի է տալիս „հայկական դատի“ խնդրին — մի հանգամանք, ուր արդէն սուլթանը և Եւրոպան, յայտնի պատճառներով, չեն կարող համերաշխ լինել, չեն կարող միանալ:

Բայց մենք զգում ենք, որ այս հողի վրայ կանգնելով, չենք կարող գոհացում տալ մեր հակառակորդներին: Ձգում ենք, որ այս ամէնի դէմ նրանք կարող են առարկել. „մենք սկզբունքով հակառակ չենք այդ բոլորին: Անդհանուր առմամբ դրանք անհրաժեշտ են, անխուսափելի են, գուցէ նոյնիսկ նպատակայարմար են, բայց... բայց ամէն բան իր տեղն ունի, ամէն բան էլ իր չափը պիտի ունենայ: Չը պէտք է մոռանալ, որ այսօր փոխանակ առաջ գնալու, տեսնում ենք մեր ետևում հարիւր հազար զոհեր և ընդհանուր յուսահատութիւն... Ահա թէ ինչու մենք կարծում ենք, որ հայ յեղափոխական անցեալում շատ բան չէր համապատասխանում ժամանակի քաղաքական հանգամանքներին, որ յեղափոխական կուսակցութիւնները յան պատրաստից հանդէս եկան, որ նախ քան գործնական քայլերի դիմելը, պէտք էր ժողովուրդը կազմակերպել և առհասարակ երիտասարդական յախուռն զգացմունքների փոխարէն՝ գործի մեջ պէտք էր ղեկավարել սառն դատողութեամբ“:

Ամէնագառն կսկիծով և վճճեթխնդրութեան կրակով լցւած՝ մենք խոնարհուում ենք այն անհամար կորուստների առաջ, որ ունեցաւ մեր տարաբախտ հայրենիքը և որոնք այս առարկութիւնների ծուծն են կազմում:

Սակայն թոյլ կը տանք մեզ նկատել որ մեր դժգոյն հակայեղափոխականները կամ եսամոլ իմաստականները չեն, որ պէտք է այսօր ժողովրդասիրութեան և հայրենասիրութեան դասեր կարդան յեղափոխականներին — հայութեան ամէնազգայուն տարրին, որ իր կեանքը դրեց նրա դատի աջողութեան համար: Հակառակորդների այս «խրատները» յիշեցնում են մեզ Շէքսպիրի այն հեզնութիւնը, որ արտասանում է հմայիչ համլէթ իր անհաւատարիմ մօր հասցէին.

Պէտք է նոյն ինքը առաքինութիւնը
ներում աղերսէ զարշ մոլութիւնից,
Այո, եւ խոնարհել, պաղատանք անէ
Եւ հրաման ինդրէ բարիք զործնելու...

Հեշտ է, այո, շատ հեշտ, պատմական բարդ, պատասխանատու, յաճախ աննախատեսնելի դէպքերը տեղի ունենալուց յետոյ, «քննադատի» դերի մէջ մտնել և սրտացաւի ծիրանի հագած՝ անվերջ կրկնել թէ «այս այսպէս չպիտի լինէր» կամ «այն այնպէս»: Ամէնասահմանափակ մարդն անգամ այդ դէպքում կարող է այնքան երեւակայութիւն ունենալ, որ կատարած իրողութիւնը զարդարէ ունէ փոփոխութիւնով կամ մի նոր գծով, և՛ զինւած այդ տեսակէտով՝ դառնայ պախարակե եղածը: Հազարաւոր մարդիկ, որոնք մասնակցել են Ֆրանսիական Յեղափոխութեանը կամ գրել են նրա մասին, ժամանակին պնդում էին, որ եթէ այս կամ այն բանը այնպէս չլինէր, ինչպէս եղաւ, աւելի լաւ կը լինէր, յեղափոխութիւնը աւելի խաղաղ ելք կը ստանար, և այլն, և այլն: Եւ եթէ մարդիկ զերծ չեն մնացել այդ տեսակ տարտամ խորհրդածութիւններից մի այնպիսի յեղափոխութեան վերաբերմամբ, որի բարիքները ծաւալեցին ամբողջ աշխարհի վրայ, — զարմանալու ոչինչ չկայ, իհարկէ,

որ հայկական արիւնալից շարժման մասին խօսողները, այն էլ հայ խօսողները, կարող են աւելի ընդարձակ ասպարէզ ունենալ պատմական հազարաւոր կարկատաններ առաջարկելու համար. . .

Սակայն մեր հակառակորդների ձեռքից այդ վերջին զէնքն էլ խլելու յուսով, մենք կանգ կ'առնենք բերած առարկութիւնների վրայ ևս, չնայած դրանց անսահման անորոշութեան:

V

Յեղափոխական գործնական ընթացքը քննդատելիս՝ պէտք է իսկապէս յեղափոխական ճանաչած ձեռնարկները գնահատեն կոտորածներից դուրս, այսինքն այն եղանակով, որով մենք քննեցինք այդ ընթացքը նախորդ գլխում: Ուրիշ կերպ վարել՝ կը նշանակէր պարզապէս հերքել շատ ակներև ճշմարտութիւններ և իվերջոյ՝ նոյնիսկ մեր շարժման իրաւունքը: Սակայն այդպէս չէ նայում իրերին ամբոխային տրամաբանութիւնը. նա կարելի է համարում դնել իր ասպետների բերանում՝ այնպիսի խօսքեր, որ մենք բերինք քիչ առաջ, այն է՝

„Յեղափոխական անցեալում շատ բան չէր համապատասխանում ժամանակի քաղաքական հանգամանքներին, չկար անհրաժեշտ նախապատրաստութիւն և ժողովրդի կազմակերպութիւն, չկար գործի մէջ սառը դատողութիւն“:

Ի՞նչ ասել է՝ „շատ բան չէր համապատասխանում ժամանակի քաղաքական հանգամանքներին“:

Երբ 1878-ին Խրիմեան վերադարձաւ Բերլինի Վեհաժողովից՝ նա ասում էր իրեն դիմողներին մտաւորապէս հետևեալը.

«Հայերս ոչինչ չստացանք: Այնտեղ ապուրր ուտում էին երկաթ է գգալներով, իսկ մենք ունէինք միայն թղթ է գգալ»):

Այսպէս էր խօսում Խրիմեանի բերանով Բերլին գնացած պատգամաւորութիւնը. այս խօսքերի մէջ էին ամփոփուում այն տպաւորութիւնները, որ ստացել էր Հայ պատգամաւորութիւնը Բերլինում և Եւրօպայի առաջնակարգ քաղաքագէտների հետ շփուելուց յետոյ: Պէտք է կուեւել — ահա այդ խօսքերի իմաստը: Մի տարի յետոյ 1879 թւի յունիսի 12-ին Պօլսի անգլիական դեսպան Ա. յարդ հեռագրում էր նախարար Սօլըսրիւրիին.

«Եթէ Բարձր Գուռը չզգուշանայ, եթէ նա չգործէ հեռատեսութեամբ ու խոհեմութեամբ, Ասիայում մի գեղեցիկ օր կը ծագի հայկական խնդիր. ինչպէս որ Եւրօպայում ծագեց բուլղարական խնդիրը, որը պատճառ եղաւ զերջին պատեւարագմին»): . . .

Եւ դէնը՝ այդ երկար հեռագրի բովանդակութիւնից երևում է, որ յիշեալ «գեղեցիկ օրը» կը գայ այն ժամանակ, երբ կ'արտայայտւի երկրում հայկական դատի առթիւ ուէշարժում:

1880 թւի յունիսի 11-ին վեց մեծ պետութիւնների մի համանման նօտա՝ ուղղւած արտաքին գործերի նախարար Արեդին փաշային՝ վերջանում էր այս խօսքերով.

«Պարտք ենք համարում ձեր ուշադրութիւնը հրաւիրել այն լուրջ պատասխանատուութեան վրայ, որ իր վրայ է աւնում Բարձր Գուռը, ուշադնելով այն միջոցների իրազօրծումը (61-րդ յօդուածի պահանջները), որ պետութիւնները անհրաժեշտ են սեպում ինչպէս տաճկական

կայսրութեան, այնպէս եւ ամբողջ եւրօպայտի շահերի համար)»:

2'երկաբացները: «Վապոյտ գրքերից» պատահական կերպով վերցրած այս կտորները ցոյց են տալիս, որ պետութիւնները ամէն կերպ աշխատում էին հայկական ունէ շարժման տեղիք չտալ, գտնելով, որ դասպանում էր բոլոր արական հարց դառնալ և առաջ բերել այնպիսի միջամտութիւններ յօգուտ հայերի, որոնք կարող էին նոյնիսկ պատերազմ յարուցանել: Եւ երևի այդ տեսակ վտանգներից խուսափելու համար էր, որ այնուհետև համարեա ամբողջ 80-ական թուականների ընթացքում եւրօպական պետութիւնները նպաստեցին Թիւրքիային՝ հայկական հարցը մոռացութեան մատնելու:

Հարցնում ենք ուրեմն, յեղափոխականների ընթացքը համապատասխանում էր «քաղաքական հանգամանքներին», թէ՛ ոչ: Ի՞նչ կարող էր մեզ համար աւելի ձեռնտու լինել, քան մեր հարցի բոլոր արական հարց դառնալը և լին: Եւ մեր բերած վկայութիւնները չեն ապացուցանում արդեօք, որ միմիայն յեղափոխական շարժման հարւածները պիտի ստիպէին հերթական խնդիր դարձնել մեր բազմաչարչար դատը: Եւ որպէս զի չ'ընկնենք ունէ սխալանքի մէջ, թողնենք որ այս հարցերին պատասխանէ «ժամանակի» յայտնի քաղաքագետներից մէկը: 1890-ին, այսինքն հայկական հարցի համարեա տասնամեայ մոռացութիւնից յետոյ՝ աւստրիական մինիստր Վալնօկի, խօսելով հայոց պահանջների մասին, բացարձակապէս յայտարարում էր:

«Եւրօպա չկայ, եւ մինչեւ որ հայկական հողը

չչաղախութի արիւննով, թող զիտննան հայերը, որ ոչինչ
չեն ստանայ»):

Ինչ էին նշանակում այս խօսքերը, եթէ ոչ՝ Եւրօպա
չէայ, բայց նա կը լինի, երբ հայերը բացարձակ
կուլի ճանապարհը կ'ընտրեն իրենց պա-
հանջներն իրագործելու համար»:

Եթէ յիշում է ընթերցողը, Բօլէն ժակմէն ևս,
1889-ին վերլուծելով եւրօպական դիւանագիտութեան
ընթացքը հայկական հարցում, գալիս էր այն եզրակա-
ցութեան, որ Եւրօպան անտարբեր գտնւեց դէպի հայերը,
որովհետեւ հայերը չէին ապստամբուել:

Կրկնում ենք ուրեմն. համապատասխանում էր յեղա-
փոխականների բռնած դիրքը «ժամանակի քաղաքական
պահանջներին» թէ՞ ոչ: Խնդիրը այդպիսով՝ քաղաքական
պայմաններն արհամարհելու մէջ չէր — սովոր-
ական մեղադրանք յեղափոխականների հասցէին, — այլ
այդ քաղաքականութեան վրայ ազդելու միջոց-
ներում»:

Թող չ'ասեն մեզ թէ այն, ինչ նպատակայարմար էր,
օրինակ, այս ինչ թւականին, կարող էր փնասակար լինել
յետագայ թւականներին ևայլն: Հասարակական մի հո-
սանք, որ հող ունի կեանքի մէջ, չէ կարող չ'առաջանալ,
իսկ մի անգամ առաջանալով՝ նա չէ կարող չզարգանալ
կամ թէ շեղուել իր ընթացքից, ինչպէս ջուրը նօրմալ
պայմաններում չէ կարող չհոսիլ, երբ նրա առջև
բացում է ճանապարհ: Գործածելով Լասսալի խօսքերը,
գա «հերկաթէ անհրատեղաթիւն» է, որ
պայմանաւորում է որոշ հասարակական ուժերի փոխա-
դարձ յարաբերութիւններով: Երկուսից մէկը ուրեմն, կամ
յեղափոխական շարժումը համապատասխանում էր ժա-

մանակի «քաղաքական պահանջներին», կամ ոչ: Եւ եթէ համապատասխանում էր, ուրեմն՝ յեղափոխական ձեռնարկները սիստէմատիկաբար պէտք է շարունակէին, քանի դեռ չէր ապահովւած Եւրոպայի իրական միջամտութիւնը: Այո՛, այդ էր պահանջում ժողովրդի դրութիւնը, այդ էին մեզ թելադրում և ուրիշ ազգերի օրինակները: Եւ երբ մեզ ասում են, որ յեղափոխական ձեռնարկները եղան կոտորածների առիթ կամ պատճառ, մենք չենք հաւատում դրան, այլ՝ արևելեան հարցին ծանօթ հեղինակներից շատերի հետ միասին՝ մնում ենք այն համոզման, որ դա հետևանք էր որքան զարհուրելի, այնքան և անմիտ, որքան դժբախտ, այնքան և անճոռնի, անօրմալ քաղաքական խաղերի — խաղեր, որոնց բացառիկ այլանդակութիւնը հասկանալու համար՝ պէտք է ինկատի ունենալ այն սոսկալի, հրէշաւոր անհեթեթութիւնները, որոնք ուղեկից եղան երևոյթին:

Մի կողմ՝ թողնելով հեռաւոր անցեալը, յիշենք, որ ուսուցողական պատերազմից յետոյ Ռուսաստանը, այս կամ այն միտումներով միշտ պաշտպանում էր հայկական խնդիրը. նոյն կառավարութիւնը 1894-ի Սասունի Մասնաժողովում ունէր իր ներկայացուցիչը. դրանից յետոյ նա մասնակցում էր բարենորոգումների ծրագրի մշակման: Աւելի բնական ոչինչ չէր կարելի երևակայել, քան այն, որ նոյն կառավարութիւնը, թէկուզ միայն ինքզինքը յարգելով, անէր այնուհետև հետևեալ քայլը ևս — պահանջէր ռեֆորմների գործադրութիւնը: Այսպէս էր նայում փաստին ամբողջ աշխարհը. այդպէս վերաբերեց Մայիսեան ծրագրին և ամբողջ հայութիւնը: Բայց ահա այլանդակութիւնը: Այս բոլորի հետ միա-

ժամանակ Լօբանովի «ուռս» երևակայութեան մէջ սկսում է օրեցօր աւելի և աւելի նւաճումներ անել այնպիսի մի անհետեւութիւն՝ թէ հայկական բարենորոգումների խնդիրը «կարող է ստեղծել սահմանակից մի նոր Բուլղարիա Ռուսաստանի համար»։ Ինչո՞ւ—որովհետև հայերի վիճակը պէտք է փոքր ինչ բարեփոխւի, այսինքն՝ նրանք պիտի դուրսն այնպիսի պայմաններում, որ նւազ անպատվեն, նւազ թալանեն ու կոտորեն, կարծես՝ ուսական բոլոր սահմաններում տաճկահայերից լաւ ապրող և քիւրդերից ու թիւրքերից շմոթւող, չթալանւող փոքրիկ ազդու թիւները մի-մի Բուլղարիաներ են Ռուսաստանի համար, կամ կարծես՝ սուլթան շամիդի ստորագրած բարեփոխումները աւելի ընդարձակ էին, քան սուլթան Մէջիդի Հատտի-Հիւմայունում խոստացած կարգերը, որոնց գործադրութիւնը երբէք ոչ մի կառավարութիւն այնքան խստութեամբ չէր պահանջել թիւրքիայից, ինչպէս 1856 թւականից սկսած այդ պահանջում էր Ռուսաստանը։

Նայինք և Ալբիոնին։ Այն Սոլսբերին, որը 1879-ին տեսնելով, որ Բերլինի դաշնագրի կէտերը մեծ յասամբ իրագործւած են, բացի Անգլիայի «առանձին երաշխաւորութեան տակ» առած Փօրթ-Ասիային վերաբերող յօդւածը—հարկաւոր սեպեց Չմիւռնիայի ծոցում մինչև իսկ ծովային ցոյց անել Թիւրքիայի դէմ, — այդ նոյն Սոլսբերին 1896-ին իր կառավարութեան բացարձակ դաւաճանութիւնը արդարացնելու համար՝ ապացուցանում էր, թէ «Տաւրոսի լեռները անմատչելի են անգլիական նաւատորմի համար»։ Ո՞վ, քան լօրդ Սօլսբերին, աւելի լաւ գիտէ, որ աշխարհիս երեսին չկայ ոչ մի ուրիշ պետութիւն, որի ծովային սահմանները

պաշարելը, կամ գրաւելը, մի խօսքով, որին վնասելը այնքան դիւրին չէր, ինչպէս Թիւրքիային, որը ոչ մի նաւատորմ չունի: Թող չ'ասեն մեզ, որ Ռուսաստանի ընդդիմութիւնը պատերազմի վտանգ էր սպառնում Անգլիային: 1895-ի օգոստոս 28-ին Պետերբուրգի անգլիական դեսպանից և նոյն օգոստոսի 29-ին Պոլսի դեսպանից ստացւած հեռագիրները հաղորդում էին անգլիական կառավարութեան, որ Լօբանօվը իր կողմից հնարաւոր զինուժների շարքն է դասում նաև „համաձայնութիւնը՝ Թոլնել Անգլիային և Տաճկաստանին ճակատ առ ճակատ“¹⁾: Այս անլուր անհետխօսութիւնների տիպարն է ներկայացնում լօրդ Սօլսբերի: Այդ թեթեւամիտ, բայց ջղային եսամոլութեամբ բռնած լօրդը՝ Գլադստօնի Լիվրպօլում յօգուտ հայերի արտասանած ճառից յետոյ՝ դուրս է գալիս նոյեմբեր ամսին Էդինբուրգում խօսելու և բացարձակ դաւաճանութեան այնպիսի մի քայլ է անում, որ անսպասելի էր ոչ միայն կողմնակի դիտողների, այլև նոյնիսկ իր ամէնամօտ ու ամէնաթափանցող քաղաքագէտ-բարեկամների համար, նա հրաժարւում է անգլիական ազատամիտ կուսակցութեան ղեկավարի դերից, պատճառաբանելով, որ Գլադստօնը և ազատամիտ կուսակցութիւնը պահանջելով պահպանողական կառավարութիւնից ունենում են վճռական քայլ անել ինպաստ հայերի, իրր թէ սխալ ընթացք են բռնում: Բայց լօրդի դաւաճանութիւնը չէ վերջանում Գլադստօնով իր բոլոր կուսակիցներով ու հայերով: Լօրդը միևնոյն ճառի մէջ դաւաճանում է և ինքն իրեն: Այդ ճառից ընդամէնը 8 ամիս առաջ, այն է 1896 մարտի 3-ին, իր մի ուրիշ ճառով նա պահանջում էր անգլիական կառա-

1) *Stu Turkey*, N° 1, 1896:

վարութիւնից շատ անգամ աւելին, քան այդ արեց Գլագստօն իր վերին աստիճանի զգոյշ ճառի մէջ: Նա պահանջում էր անգլիական կառավարութիւնից, թէկուզ հէնց առանց միւս պետութիւնների համաձայնութեան, մեծազոր զինուորի դիմել յօգուտ հայերի և նոյնիսկ պարզ ակնարկում էր, որ այդ առանձին գործողութիւնը կարող է արտայայտել ուէ տաճկական նաւահանգստի գրաւումով ¹⁾:

Անգլո-ուսական հակամարտութիւն՝ թուրաւորած հրեշաւոր կասկածների ուրականներով՝ ահա այն սոսկալի հողը, ուր մեր բախտը որոշելու հրաւիրած «քաղաքագէտները» կորցրին ոչ միայն իրենց խիղճն ու ամօթը, որ չեն էլ ուզում ունենալ, այլև իրենց խելքն ու դատելու ընդունակութիւնները: Տեսէք ինչ էր գրում Պօլսի անգլիական գեսպանը իր կառավարութեան 1879 թւին.

(«Ռուզարական միւլնոյն ինտրիգները այժմ կատարում են Փոքր Ասիայում՝ թէ այն նպատակով, որ վերականգնեն հայկական ազգութիւնը եւ թէ նրա համար, որ ստեղծեն իրերի այնպիսի մի գրութիւն, որը սարոսի մի ազգակ յարուցանէր ամբողջ քրիստոնեայ ազգարնակութեան մէջ եւ եւրօպական միջամտութիւն առաջ բերէր: Ես մի քանի անգամ նախազգուշացրել եմ տաճիկ մինիստրներին, որ եթէ նրանք չչտապեն ի կատար ածել Բերլինի գաշնագրի որոշումը հայերի մասին... այն ժամանակ նրանք կը տեսնեն, բայց արդէն շատ ուշ, որ սուլթանը կը զրկւի մի քանի գաւառներից»):

Ո՞վ է «Ռուզարական ինտրիգներ» սարքողը—ուսը-
ո՞վ է ուզում «Եւրօպական միջամտութիւն առաջ բե-

1) «Սուլթան եւ պետութիւններ», Մակկոլի:

րել՝ — ուսը. ո՞վ պէտք է մի քանի գաւառներից
զբիւս սուլթանին՝ — ուսը: Այդպէս է մտածում անգ-
լիացիներն, այդպէս է հասկանում իրականութիւնը անգ-
լիական «փորձեալ» դիպլոմատը: Միևնոյն ժամանակ
հարցրէք ուսին. ո՞վ է Տաճկաստանում շարունակ
«ինտրիգներ» լարում Ռուսաստանի դէմ — Անգլիան.
ո՞վ է անդադար հրաւիրում պետութիւններին «միջա-
մտել» հայկական հարցում — Անգլիան, որ ուզում է
Ռուսաստանի դէմ պատնէշ կանգնել Փոքր-Ասիայում.
ո՞վ է խրախուսում հայ յեղափոխական շարժումը —
Անգլիան, որ նպատակ ունի դրանով ձեռք բերել Տաճ-
կաստանում իր կորցրած ազդեցութիւնը — այդպէս կը
պատասխանէ ձեզ ուսը, այդպէս կ'ասէ ձեզ ուսա-
կան «հեռատես» դիպլոմատը:

Եկէք ու նախատեսէք: Եկէք ու գործունէութեան
ծրագիր մշակեցէք ոչ թէ մարդկային ամբողջ պատմու-
թեան մէջ ուսումնասիրեալ սկզբունքներն ինկատի առ-
նելով, այլ այն այլանդակ, անօրմալ, ոչ մի հետեւողակա-
նութեան շնթարկուող քաղաքական կասկածներից առ-
կողմ ուսումնասիրելու, որոնք ամէն ինչ կարող են
տեղի ունենալ մի ամէնալիրբ պոլիտիկանի գլուխում, մի
քաղաքական զգվզէկի երեւակայութեան մէջ կամ մի
տխմար «չինօյնիկի» հաշիւներում — մի «չինօյնիկի», որը
նոր պաշտօնի անցած՝ բռնեալ է նոր բան հնարելու
տենչով և անպատճառ իր նախորդներից չնախատեսեալ
վտանգներ է ուզում հնարել պետութեան համար...
Եկէք ու յարմարեցէք քաղաքական «րոպէներին» պա-
հանջներին: Եւ ե՞րբ ու որի՞ն յարմարէին յեղափոխա-
կանները — ուսին՝ թէ անգլիացուն, այն Սոլսբերիին,
որ խօսում էր Տաւրոսի անմատչելիութեան մասին, թէ՞

այն Սօլբրիւրիին, որ 1896 թւի սեպտեմբերին սպառնում էր սուլթանին թէ՛ «եթէ իր կայսրութեան յոռի վարչութիւնը շարունակւի, նա կը զը կ'ւի իր գահից»¹⁾։ այն Լօբանօվն յարմարւէին, որը գոյութիւն ունէր 1895 թւի աւաջին կիսում, թէ՛ այն Լօբանօվին, որը պատկերացաւ մեր առջև միևնոյն թւի երկրորդ կիսում։ այն Ռօզբերիին յարմարւէին, որ մարտ ամսին էր խօսում, թէ՛ այն միւս Ռօզբերիին, որ զառանցում էր նոյն տարւայ նոյեմբերին։ Կար նոյնիսկ յարմարելու կարելութիւն կամ գոնէ կարելութեան ստւեր անգամ։

Եւ թող ոչ ոք չկարծէ, թէ մեր յեղափոխական ֆանատիկոսութիւնն է, որ ստիպում է մեզ Եւրօպայի պատասխանատուութեանը ձգել հայկական կոտորածները։ Հազարաւոր հրատարակութիւնների մէջ, հազարաւոր ամբօժաններից, երկրագնդի հազարաւոր անկիւններում ամբողջ մարդկութեան մտածող ու զգացող մասը ևս ուրիշ կերպ չգնահատեց այն զարհուրելի հոգի անաւորութիւնը, որ 61-րդ յօդւածով արին հայերիս եւրօպական պետութիւնները իրենց այլասեռած ու նախատեսնելու ընդունակութիւնից զուրկ գիպլօմատներով։

Թող դրօշմէ ուրեմն պատմութիւնը ժամանակակից Եւրօպայի ճակատին հրէշաւոր դաւաճանութեան յաւիտենական արատը, որից սակայն միշտ ազատ կը մնայ հայ երիտասարդութեան տյն փոքրամասնութիւնը, որ ընտրեց կուրի փշոտ դաշտը՝ տոգորւած իր ծնող ժողովոգի բարեկեցութեան գաղափարով, պատրաստ միշտ զօհելու սուրբ հայրենիքին. . .

Սակայն — ստում են ամբօխային տրամաբանութեան ամէն կարգի ներկայացուցիչները — բոլոր քաղաքական

1) Ed. Driault : « La Question d'Orient », 6ր. 258r

խաղերի և անաջողութիւնների առաջը կարելի էր առնել, եթէ յեղափոխական կազմակերպութիւնները՝ մանր «խլրտուժների» փոխարէն՝ աշխատէին նախօրոք լաւ պատարաստել լաւ կազմակերպել ժողովուրդը:

Պէտք չկայ իհարկէ ծանրանալու այստեղ այն խնդրի վրայ, որ «նախապատրաստելու» և ըստ կարելոյն լայն ծաւալով «կազմակերպելու» պահանջը բոլոր գործող յեղափոխականների ի դէպ չէ եղել և կը լինի միշտ: Կուէի դաշտը նետելիս՝ ջանալ ըստ կարելոյն մեծ ուժ ունենալ համախմբւած—գա այնքան բնական, այնքան տարրական և նոյնիսկ այնքան banal մի պահանջ է, որ միմիայն կրէտիւնները կարող են տարակուսել, թէ յեղափոխականները կարող էին արհամարհել այդ պահանջը: Բայց եթէ այդպիսի կրէտիւններ կան մեր մէջ, թող նրանք ստուգեն մեր կարծիքը ամբաստանող յեղափոխականների ծրագիրներում, թերթերում, պաշտօնական մարմինների կամ անհատ-գործիչների կեանքում և այլն: Եւ եթէ դրանից յետոյ էլ դեռ ապացոյցները պակասեն, թող դիմեն վերջապէս հայութեան այն մեծագոյն մասին, որը մի տեղ միանգամայն անտարբեր գտնւեց դէպի ընդհանուր ազգային խնդիրները, միւս տեղ քաղաքացիական արիութիւն չունեցաւ նպաստելու մեր շարժման, երրորդ տեղ հակայեղափոխական յայտնւեց, չորրորդ տեղ հարկ գտաւ մինչև իսկ իր յատուկ սօֆտաներին կտուրները բարձրացնել՝ գործի կողմնակից յեղափոխականների դէմ՝ սալա վաթ կանչելու համար: Հայութեան այդ մեծագոյն մասը անշուշտ կը հաստատէ, որ արդարև, եթէ գործի յեղափոխականները «քջով» հանդէս եկան, դա, յամենայն դէպս, չէ կարող բացատրուել նրանով, որ այդ յեղափոխականները «շատը» չէին ուզում

կամ «շատը» ունենալու համար ու է ջանք էին
խնայում: Այդ հեղինակաւոր ցուցմունքով էլ հարցը
ինքնին կը փակւի՝ միանգամ ընդ միշտ պարզելով որ
այն, ինչ բացարձակ տեսակէտից մեզ թւում է
քիչ համեմատական տեսակէտից եղել է «ւժերի այն
maximum-ը (ամէնաշատը), որ՝ որոշ ժամանակում
և որոշ տեղի հանգամանքներում՝ կարելի է համա-
խմբել յեղափոխական գործի շուրջը:

Ենք ուզում երկարօրէն ծանրանալ և այն մասին,
որ յեղափոխական ձեռնարկները ոչ միայն չէին հակա-
սում նախապատրաստութեան պահանջին, այլև նրանք
անխուսափելի միջոցներ էին այդ պահանջին գոհացում
տալու: Մենք միայն կ'ամփոփենք այստեղ զանազան
առիթներով այդ մասին «Գրօշակում» յայտնած մեր
կարծիքները:

«Եթէ մարդկային անցեալին նախակարապետները իրենց
գաղափարներն առաջ մղելու համար սպասէին, որ նախա-
պէս ամէն ոք իրենց հետ համաձայնէր, մեր քաղաքա-
կրթութիւնը դեռ ևս կը լինէր քարի շօջանում», ասել
է մի հրապարակախօս՝ մեզ թողնելով մտաբերել այն
բոլոր խաչերը, խարոյկները, կախաղանները, գիյօտիները,
բանտերը—մի խօսքով՝ արեան ու անհամար տանջանք-
ների այն հսկայական հնօցները, որոնց միջից անցել են
յեղափոխիչ գաղափարները: Ինչպէս երեսայի համար
անհրաժեշտ է սիրող մայրը, այնպէս էլ յեղափոխական
գաղափարի աճման համար միշտ անհրաժեշտ են եղել
մութ բանտերի խոնաւ օրօրօցները, երկաթէ շղթաների
բազմալեզու նանիները և կարմիր դահիճների մահաբեր
գուրգուրանքները: Աւրիշ էլք չկայ նոր գաղափարների
յաղթանակի համար, կամ այլ խօսքով՝ չկայ ուրիշ

միջոց յեղափոխական գործը ն ա խ ա պ ա տ ր ա ս տ ե-
լ ու համար: Այ՛ո՛, չկայ այս աշխարհում աւելի կրթիչ
օրինակ, քան գ ո Ր Ց Ե Ր Ի կենդանի օրինակն է. չկայ
աշխարհում ոչ մի լսարան, ուր կարելի լինէր ժողովել
այնքան ունկնդիրներ, որքան ունենում է գ ո Ր Ց Ի
ասպարէզը նեուած յեղափոխական քարոզիչը. չկայ ոչ
մի ձայն աշխարհումս աւելի հեռու, աւելի մեծ տարա-
ծութեան վրայ լսող, քան գ ո Ր Ց Ե Ր Ի գոռում-գոչիւնն
է. չկայ ոչ մի լեզու, որով կարելի լինէր խօսել ամբողջ
մարդկութեան առաջ հասկանալի խօսքերով, բացի
գ ո Ր Ց Ե Ր Ի լեզուից:

Եւ իրաւ: Ո՞վ աւելի մեծ համարձակութիւն, աւելի
մեծ բարոյական իրաւունք կ'ունենար անձնւիրութեան
հրաւիրել ժողովոգի բոլոր կենսունակ տարրերին, քան
իւքը՝ առաջինը արեան դաշտ նետուող յեղափոխականը:
Ո՞վ արդեօք, ի՞նչ մարդ, ի՞նչ քարոզիչ կամ քարոյներ
կարող էին Պօլսից մինչև Վան, Ռուսաստանից մինչև
Ամերիկա ցնցել հայութիւնը՝ բոլորի սրտին միևնոյն
զարկը հաղորդելով, բոլորի աւջև պարզ ամիտփելով
մեր ընդհանուր ազգային իղձերը, քան այդ անում էին
յեղափոխական ձեռնարկները: Ո՞ր գրողը արդեօք, ո՞ր
լեզուագէտը, ո՞ր հարուստը, ո՞ր հռետորը կարող էր հայ-
կական պահանջների մասին այնքան հրատարակութիւն-
ների մէջ, այնքան լեզուներով, այնքան գրել, այնքան
տպագրել, այնքան սրտեր ու մտքեր յուզել, որքան գրել,
տպագրել, զգալ ու մտածել էր տալիս հայ ժողովոգի
ծանր, անօրմալ դժոխային կացութեան թարգմանը —
յեղափոխական բողոքը: Ո՞ւր են վերջապէս — հրոսակային
կամ տէնօրական, զինատար կամ պարտիզանական խմբերի
կռիւներից դուրս — այն դահլիճները, այն զօրանոցները,

ուր հայր պիտի վարժէր արեան գործի մէջ և յեղափոխական բանակներ «պատրաստէր» կամ «կազմակերպէր»:

Դժւար էէ, իհարկէ, գերադրական ածականների մի ամբողջ բեռ շալակած, նկարագրել միամիտների առաջ «լուռ ու մունջ նախապատրաստութիւնների» ֆանտաստիկական հեռանկարը՝ անպայման յաղթանակով պսակած, և յետոյ զէնք դարձնել այդ զառանցանքները նոյն նախապատրաստութեան գործին ամբողջ հոգւով նւիրածների գէմ: Բայց «le superlatif est le cachet des sots» (գերադրական ձևը յիմարների կնիքն է) — վաղուց ասել է Մետերնիխ, և մեզ թոյլ կը տրւի, իհարկէ, եթէ ոչ Մետերնիխից աւելի հեռու գնալ, գէթ համաձայնել նրա հետ: Հասկանանք վերջապէս, որ անմտութիւն է պահանջել մարդկանցից մի բան, որ անկարելի է իրագործել: Ի՞նչպէս պատրաստել «տարիների ընթացքում լուռութեան մէջ»: Պէտք է, որ երկիր մտնեն մարդիկ. պէտք է, որ դրանք տեսնեն, խօսեն, համոզեն, բանակցեն կարևոր անձանց և տեղերի հետ. պէտք է գրագրութիւն ունենան. պէտք է զէնք տարածեն, ստանան, գնեն, պահպանեն, տեղափոխեն. պէտք է զէնքի և նրա գործածութեանը ծանօթացնեն մարդկանց, թէ՛ ոչ: Փորձեցէք միայն փուչ խօսքերից կենդանանար գործի անցնել. փորձեցէք միայն շատ կարճ ժամանակ — այո, թէկուզ ամէնակարճ ժամանակ — «նախապատրաստութեամբ» զբաղւել, և դուք կը տեսնէք, որ լուռութիւնը ձեր գործում շուտով կը խանգարւի: Թշնամին ոչ ձեզնից թոյլ է, ոչ էլ աւելի վատ կազմակերպւած: Ար որ գնաք, նրա ցանցերը, նրա սահմանափակումները, նրա պաշտօնական և ոչ պաշտօնական գործակալները կանգնելու

են ձեր առջև դէմ յանդիման, և այսօր չէ եգուց՝ դուք պիտի բռնուէք գործի վրայ: Ահա թէ ինչու «ըռութիւն» քարոզողները նրանք են մեծ մասամբ, որոնք ոչ մի առնչութիւն չունեն գործնական յեղափոխութեան հետ: Ահա թէ ինչու հսկայական նախապատրաստութեան» քարոզների հետ նրանք դատապարտուած են «քաղաքակրթական» զարգացման մաշած երգերը կրկնելու, տեղը եկած ժամանակ հնչեցնելու նաև «համբերութեան», «հաւատարմութեան», կամ «տեսական յեղափոխութեան» քարոզները: Մի թշնամի, որ ունի դարաւոր կազմակերպութիւն, որ իր ամբողջ քայքայման հետ դեռ ընդունակ է կանոնաւոր պատերազմներ մղել և երբեմն յաղթել իր հակառակորդներին,— հեշտ բան չէ այդ թշնամուն այնքան երկար ժամանակ խաբւած պահել, որչափ կը պահանջի նրա ուժը հակակշռող ուժ կազմակերպելու համար երկրի մէջ: Այդ ձգտումներում դուք աջողութիւն չէք կարող ունենալ և հետևաբար՝ թշնամուն սիստէմատիքաբար խաբել ձգտելով՝ դուք սիստէմատիքաբար խաբած կը լինէք միայն ձեր բարեկամներին ու ընկերներին, որոնք միաժտաբար հաւատալով ձեզ՝ թէ դուք կարող էք և պէտք է խաբէք թշնամուն, մի գեղեցիկ օր կը տեսնեն, որ միայն իրենք են ձեզնից խաբւել — աւելի ոչինչ:

Այդպիսի փոխադարձ յարաբերութիւններ, իհարկէ, միանգամայն վայել յարաբերութիւններ են «սալավաթ» պոռայող սօֆիստների և իրենց բարեկամների միջև, և մենք դրա դէմ ոչինչ չունենք ասելու. բայց այդ «սալավաթների» իսկական արժէքը վերջապէս հասկանալու համար մենք մի բոլոր մի կողմ կը թողնենք մեր հայեացքները գործի վրայ և կը կանգնենք մեր «քննադատների»

տեսակէտի վրայ: Հակառակ տրամաբանական ու սօցիո-
լոգիական ամէն օրէնքի՝ համաձայնեմք մի բողոք, որ
հնարաւոր էր լուծեան մէջ պատրաստուել և այնպէս
հրապարակ դուրս գալ: Ենթադրենք, որ—թէկուզ դի-
թական գաւազանի մի հարւածով—յեղափոխականները
գործի դիմէին՝ բաւական լայն չափերով կազմակերպուած
ժողովրդի հետ: Միթէ՞ մենք կարող կը լինէինք հաս-
տատապէս ասել, որ այդ դէպքում մենք արդէն ապա-
հովուած կը լինէինք մեր ազատութեան գործը: Ո՛ր է
ուժերի այն minimum-ը (ամէնաքիչ չափը), որ պահանջ-
ուում է գործ սկսելու համար: Վերջին յոյն-տաճկական
պատերազմի ժամանակ Յունաստանը, իբրև անկախ երկիր,
իր մինիստրներով, իր զինուորական խորհուրդներով, սե-
փական հողի վրայ, իր ազատ զօրանոցներում ժողոված,
կըթած և կազմակերպած 60-70 հազար զօրք դուրս
բերեց Ցաճկաստանի դէմ և էլի յաղթուեց: 2էր կարող
արդեօք մի այդպիսի դժբախտութիւն մեզ հետ ևս պա-
տահել, թէկուզ կուրի դաշտ դուրս եկած լինէինք „մեծ
պատրաստութիւններով“: Մեզ կարող են իրաւամբ նկա-
տել, իհարկէ, որ գաղափարով ոգևորուած մի յեղափո-
խականը արժէ ամէնապակասը՝ տասը այնպիսի պաշտօ-
նական կուռղներ, ինչպիսին է զինուորը, այն էլ յունական
զինուորը, և ուրեմն օրինակը համոզեցուցիչ է: Դիմենք
ուրիշ օրինակների: Բուլղարները ապստամբել են 1828,
1837, 1841, 1862, 1867, 1768, 1872 և 1876
թւերին. ազատուել են 1878. ին. ուրեմն շարժումը տւել
է 50 տարի, ունենալով 44 տարւայ ընթացքում ան-
ընդհատ անաջողութիւն: Յոյները նապստամբել են 1770,
1798, 1801, 1812, 1820-1829 թւերին. ազատութիւն
գտան 1829-1830 թւին, այսինքն 60 տարուց յետոյ,

շատ անգամ տեղիք տալով զարհուրելի կոտորածների և ամբողջ Պելլոպոնէսի ու Մորէայի կատարեալ աւերման: Միթէ՞ բուլղարները և մանաւանդ յոյները միշտ «անպատրաստ» են կռիի դուրս եկել, որ տասնեակ տարիների ընթացքում միմիայն սոսկայի ձախորդութիւններ են ունեցել: Այսօրւայ ազատ Կրէտէն, որ իր կռիւը սկսեց դեռ Յունաստանի հետ միասին, ապստամբել է աւելի քան տասն անգամ, պաշտպանելով իր դատը ամբողջ 128 տարի: Սերբերը կռւել են 40 տարու չափ և նախ քան ազատուել՝ պարտութիւններ են կրել շատ անգամ: Ռումանական շարժումը, նոյնպէս արիւնով ներկւած, տեւել է ոչ պակաս 100 տարուց: Բօսնիա և Հերցոգովինա կռւել են 1830 թւից մինչ 1870-ը, Իրլանդիան 600 տարի է չէ ընկճւում իր ազատութեան տենչանքների մէջ, չնայած իր միլիոնաւոր զոհերին: Դեռ երէկ մարանչող, հերոսական Կուբան միմիայն մեր դարում երեք խոշոր ապստամբութիւններ է ունեցել՝ միմիայն վերջին ապստամբութեան ժամանակ 200 հազար զոհ տալով: Իտալական յեղափոխութիւնը 60 տարի պահանջեց յաղթանակը տանելու համար: Հարցնում ենք. միթէ՞ սրանք բոլորն էլ ամէն անգամ «անպատրաստ» են պատմական բեմ դուրս եկել, որ չեն կարողացել մի անգամից իրենց ազատութիւնը ապահովել . .

Ընթերցողը տեսնում է ուրեմն, որ «յուրջ» նախապատրաստութեան պահանջները — որքան էլ շեշտակի ձևերով կրկնեն նրանց հայ դպիրներն ու դպրիկները — իսկապէս զուրկ են լրջութեան ու է յատկութիւնից և ուրիշ կերպ չէ կարելի հասկանալ այդ պահանջները, բայց եթէ այն մտքով միայն, որ «յեղափոխական կռիւը

այնպէս պիտի մղուէր, որ արդէն անպայման յաղթանակած լինէր¹։ Բայց եթէ պատմական երևոյթները պէտք է քննեն ոչ թէ իրենց ժամանակի և տեղի հետ սերտ կապւած պայմաններում, այլ ցանկու թիւնների տեսակետից, ո՞ւր կարող են վերջանալ այս տեսակ գանգատների սահմանները։ Երևակայեցէք մի բոպէ, որ մենք այնքան բախտաւոր լինէինք, որ մինչև օրս մի միայն յեղափոխական շարքերից լինէինք զօհեր տւած, բայց և այնպէս՝ դեռ ևս ապարդիւն։ 2է՞ր կարելի միթէ այդ գէպքում ևս ցանկութիւնների հարուստ աշխարհից պոկել բաղձանքների մի նոր փունջ և կրկին դատափետել յեղափոխականներին, որ դրանք—չնորհիւ իրենց «անպատրաստութեան», «սառն դատողութեան» բացակայութեան, «քաղաքական անփորձութեան» և ընդ—միայն ծծում են սերնդի ամէնալաւ ուժերը և վատնում ահագին միջոցներ առանց ուէ «արդիւնքի»։ Ենթադրենք այնուհետև, որ յեղափոխականներին աջողւած լինէր որոշ զօհերով այս կամ այն բարեփոխումները ձեռք բերել Հայաստանում։ Միթէ՞ դժուար կը լինէր այստեղ էլ մեղադրել նրանց, որ—չնորհիւ իրենց «անպատրաստութեան» և այլն — չկարողացան գործը այնպէս տանել, որ զօհեր քիչ տային կամ միւսնոյն զօհերով աւելի մեծ փոփոխութիւններ ձեռք բերէին։ 2է՞ր կարելի միթէ մի փոքր էլ դէնր գնալ և հիմնելով նոյն «անպատրաստութեան», «սառն դատողութեան» բացակայութեան, «քաղաքական փորձառութեան» վրայ՝ պահանջել մինչև իսկ, որ ամենեին զոհ չտային, այլ այնպէս՝ միմիայն քաղաքական աջող խաղերի և մեծամեծ կապերի միջոցով՝ ուղղակի առաջ քշէին եւրօպական միջամտութեան գործը և ապահովէին հայկական

Հարցի նպաստաւոր լուծումը: Եւ այդպէս շարունակելով՝ չէ՞ր կարելի միթէ հասնել վերջապէս Գամաու-Քաթիպայի «Հայի բաղձանքին» . —

«Ա՛խ, ինչպէ՛ս կուզեմ տեսնել մեր հային
Ազատ, ապահով, կրթեալ, ինքնագոհ,
Ամէն հայի տուն — գրախա երկնային...
Լոկ այդ լանն ինձնից չուզենար մէկ գոհ...»

Ա՛խ, ինչպէ՛ս կուզեմ տեսնել Հայաստան
Մի օր ազատաւ թշնամու ձեռքէն,
Հայի երկիրը — հայի սեփական...
Լոկ այդ չի բաժնէր ինձ իմ կողմէն»...»

Բայց — բարեբախտաբար թէ դժբախտաբար, չգիտենք — բաղձանքները չեն, որ ընթացք են տալիս կեանքին: Ռուսերէն մի առած ասում է, որ «դժոխքի ճանապարհն էլ բարի ցանկութիւններով է սփռւած», բայց և այնպէս մենք գիտենք, որ այդ ճանապարհը առհասարակ հրապուրիչ չէ մարդկանց համար: Սակայն, ընթերցող, ոչ զարմանանք և ոչ էլ զայրանանք: Ամբոխային տրամաբանութեան մատնւած բոլոր գլուխների ընդհանուր ճակատագիրն է այդ — մի ճակատագիր, որ միշտ իր անգթութեան գազաթնակէտին է հասնում մանաւանդ մեծ ձախորդութիւնների դէպքերում: Գա մարդկային ամբողջ պատմութեան մէջ գիտւած մի ընդհանուր երեւոյթ է, որ շեշտում են բոլոր ուղղութիւնների սօցիոլոգները:

«Ամէնազարգացած հասարակութիւնների մէջ — ասում է, օրինակ, Վ. օրմս իր «Organisme et Société» աշխատութեան մէջ — հանրային դժբախտութիւնն երբ միջոցին, մինչեւ իսկ միմիայն երեւակայական դժբախտութիւններից ծնւած երկիւղի ազդեցութեան տակ, երբեմն վերածնում են հին ժամանակների ամենասարսափելի, յաճախ ամենարարարու սովորութիւնները»:

Ուրիշ խօսքով և մեր նիւթին յարմարեցնելով՝ դա

նշանակում է, որ ընդհանուր ազգային դժբախտութեան ժամանակ՝ մարդկային կորուստների, մարդկային կոտորածների հետ անմիջապէս կապւում են նաև մտքերի անխնայ կոտորածները: Ահա թէ ինչու հասկանալի է, որ աջողութեան օրերում դժգոհ «խոհեմների» թիւը ոչ այնքան մեծ կը լինէր և ոչ էլ այդ «խելօքները» կը կարողանային այնքան ունկնդիրներ գտնել, որքան այժմ: Աջողութեան օրերում ընդհանուր յոյսերի պայծառ ալիքները իրենց բուռն հոսանքի մէջ կ'առնէին այսօրւայ նոյնիսկ հոգեպէս անանկ դժգոհներին, և դրանք այն ժամանակ ոչ մի առիթ չէին բաց թողնի՝ նոյն կտուրների վրայից, որտեղից այսօր արշաւանքներ են քարոզում գործի յեղափոխականների դէմ, պոռալ արար-աշխարհին, որ նրանք միշտ էլ հաւանել ու օգնել են ամէն կարգի յեղափոխական ձեռնարկներին, որ միշտ էլ համոզած յեղափոխականների շարքումն են եղել, որ նոյնիսկ առանց իրենց մասնակցութեան ոչ մի աջողութիւն ձեռք բերած չէր լինի ևլն. ևլն: Բայց ներկայ սև օրերում գրանք — «խելօքներին» յատուկ տրամաբանութեամբ, նաև «հոտառութեամբ» — յարմարւում են միջավայրին և սուտարացնում «քննադատների» շարքերը՝ մինչև որ վաղը-միւս օր, երբ պատմական անիւր ունէ ձևով կը թերւի յօգուտ հայութեան, կրկին նրանք յախուռն հոսանքով կը շտապեն ամէնակատաղի յեղափոխականների աթոռները գրաւել, մոռանալով և նոյնիսկ հերքելով, որ հէնց այն բոպէին՝ երբ պատմական անիւր թեքում էր, նրանք դեռ ևս քափ ու քրտինք էին թափում՝ ամբոխի առաջ իրենց «քննադատութիւններին» աւելի և աւելի համոզիչ ձև տալու...

Ամփոփենք մեր կարծիքները:

Ասել՝ թէ յեղափոխականները նախ քան գործնական քայլերի դիմելը՝ պէտք է վաղօրոք լաւ «կազմակերպւէին» և շնորհաբար միանային է թէ ասել, որ գործը պէտք է լաւ տանւէր: Պարզ է, որ այդ տեսակ «խորհուրդները» ոչ դիմադրող համար արժէք չեն կարող ունենալ: Գործը, յեղափոխական գործը, լաւ տանելը — մեր իդէալն է արդէն. բայց ի՞նչպէս պիտի տանւէր այդ գործը կամ ի՞նչպէս պիտի տանւի, որ լաւ լինի, որ լաւ կազմակերպուած լինենք և շնորհաբար ամբողջ հարցը, որի դիմաց իրար խառնուում, իրար հակասում, իրար ոչնչացնում են մեր «խորհուրդները», «խորհուրդները», մեր «սօփոսա-դպիրները» սալավաթները, մեր «քննադատող» դատարկ կարասիների՝ ներդաշնակութիւնից զուրկ, անմիտ ու միապաղաղ ձայները:

«Պատրաստութեան» կամ «վաղաժամութեան» անմիտ ողբերի մէջ չէ կայանում մեր շարժման աջողութիւնը (որովհետեւ իսկապէս երբ յեղափոխական նախաձեռնութեան մէջ մի բան կատարուում է կամ կարելի է կատարել դա ինքնըստինքեան արդէն նշանակում է, որ «ժամը» հասել է), այլ կ ու շ յ ա ռ ա տ ե ու թ ե ա ն մէջ: Մեր դատը վաղուց է հայերիս համար սոսկալի մի վերքի նշանակութիւն ստացել: Շնորհիւ թիւրք կառավարութեան կատարեալ կուրուութեան՝ նա նոյն վերքի նշանակութիւնն է ստացել թիւրքիայի համար ևս: Թէ մենք և թէ թիւրքիան ընտրել ենք այդ վերքի դէմ վիրաբուժական միջոց, մենք դիմել ենք յեղափոխութեան, թիւրքիան՝ մեզ կոտորելու միջոցին: Մեզ մնում է ուրեմն երկուսից մէկը — կամ սեփական ձեռքով թաղել մեր դատը, կամ թէ շարունակել մեր

կոիւր ա յ ն ք ա ն, որ նա՝ թիւրքերի դէմ մինչև այժմ ուղղած դժգոհութիւնների, պաշտօնական բողոքների և թղթի սպառնալիքների շրջանը անցնելով, վերջապէս մի վէրք գ ա ո ն ա յ նաև այն ազգութիւնների ու պետութիւնների համար, որոնք կապ ունեն թիւրքիայի և մեր հարցի հետ: Այն օրը, երբ դրանք ևս կը համոզին, որ այդ վէրքի դէմ պէտք է դիմել վիրաբուժութեան, մեր դատը ապահոված կը լինի այդ օրը կը լինի և մեր աջոգութեան օրը:

Զը մոռանանք, որ մեր մօտիկ անցեալը — որքան և ծանր լինի դա մեզ՝ ժամանակակիցներիս համար — պատմութեան մէջ շատ աննշան շրջան պիտի համարուի, որպէս զի կարելի լինի նրանից ուէ համարձակ եզրակացութիւնների յանգել: Մի թոյլ անդէն, ցիրուցան, բաւականաչափ անհատական և ռազմական բնազդներով աղքատ ժողովրդի ազատագրական շարժումը այնպիսի մի հասարակական երևոյթ չէ, որ իր առաջին բողոքները ձգելուն պէս՝ հասունութեան հասնէր: Այդպիսի մի աջոգութիւն, ինչպէս վերը տեսանք, չեն ունեցել նոյնիսկ մեզնից աւելի նպաստաւոր պայմաններում գտնուող ազգերը. — ուր մնաց նոյնը պահանջել ընդամենը տասը տարւայ հասակ ունեցող մանուկ հայ յեղափոխութիւնից:

Այո, անցեալի կորուստները ճնշում, ճմլում են մեր սրտերն ու մտքերը, բայց չնմանենք թուղիդիտէսի այն հերոսին, որը կուի միջոցին փոխանակ իր հակառակորդի հարւածներին դիմադրելու, փոխանակ աշխատելու նրա մարմնի ամէնազգայուն կէտերին հարւածներ տեղալու, ձեռքերը սեղմում էր մարմնի այն տեղերին, ուր ընկնում էին հակառակորդի հարւածները: Կասկած չկայ, որ

այդպիսի մի ընթացք մեզ կը տանէր միայն դէպի անպայման կորուստ, այն ինչ՝ յարատե կռիւը դեռ շատ բան կարող է խոստանալ մեզ: Եւ ո՞վ գիտէ՝ թէ ինչ գոյնով պիտի լուսաբանեն այսօրւայ մեր կորուստները 50-100 տարուց յետոյ, երբ դրանք կը կապեն Տետեղականութեամբ՝ մեր կեանքում տեղի ունենալիք յետագայ երևոյթների հետ: Ար՞ ազգը արդեօք — երբեմն ստրուկ, իսկ այժմ՝ ազատ — չէ մոռացել իր կրած զարհուրելի կորուստները: Ար՞ը արդեօք դրանցից կը փոխէր այսօրւայ իր ազատութիւնը նախկին վիճակի հետ և անցեալ կեանքի այնպիսի մի ընթացքի հետ, ուր ոչ մի զոհողութիւն, ոչ մի աւերում չլինէր կատարած: „Ձկայ մարդկութեան համար աւելի գեղեցիկ յոյս, քան մի ճնշած ազգի յարութիւն առնելը“ — ստիպւած է եղել խոստովանել նոյնիսկ այնպիսի մի հրէշ, որպիսին էր Դիգրայէլի:

Յարատե կռիւ — յաճախ և երկար ժամանակ գուցէ անաջող՝ շնայած երբեմն նոյնիսկ իր լայն ծաւալին, — ահա թէ ուր է մեր փրկութեան բանալին: Պահպանեն՛նք, շարունակեն՛նք կռիւը, որպէս զի նա լայնանայ, ընդարձակի և ընդարձակեցով՝ յարատեի — ահա դէպի մեր նպատակը տանող միակ ճանապարհը: Չը շեղեն՛նք այդ ճանապարհից, որ պատճառների և հետևանքների կապակցութեամբ ունի պատմութեան մէջ հաստատուած օրէնքի ուժ, չը շեղեն՛նք այդ միակ ճանապարհից, որ սիւնած է յուսատու ապագայի գրաւիչ ծաղիկներով. . .





